

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերություն

2022թ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

N50006-1y 28.04.2023թ.

0012, ք. Երևան, Վ. Վաղարշյան 20, հեռ.(012) 21-11-11, e-mail: info@arpa-sevan.am

Տեղաբաշխված արժեթղթերի դասը	հասարակ անվանական բաժնետոմսեր
Արժեթղթերի քանակը	20452 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը	2500 դրամ

«Մենք ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է ընկերությունը»:

Պատասխանատու անձինք

Պարույր Բակոբյան

Սեդա Փարսյան

Զորիկ Վարդանյան

գլխավոր տնօրեն

գլխավոր հաշվապահ

խորհրդի անդամ



1. Տեղեկատվություն Ընկերության մասին

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը հիմնադրվել է 1969թ. որպես «Արփա-Սևանշին» հատուկ մասնագիտացված շինարարական կազմակերպություն: 1995թ.-ին վերակազմավորվել է ՀՀ Էներգետիկայի նախարարության «Արփա-Սևան» ՓԲԸ, իսկ 1998թ.-ին՝ «Արփա-Սևան» ԲԲԸ:

Ընկերությունը գրանցված է պետական ռեգիստրի Արաբկիրի ստորաբաժանման կողմից գրանցման համարը՝ 264.120.00831 գրանցման ամսաթիվը 16.02.1995թ.:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 51 130 000 ՀՀ դրամ: Ընկերության հիմնական գործունեությունը կապիտալ շինարարության իրականացումն է քաղաքաշինության, էներգետիկական, հիդրոտեխնիկական, կապի և տրանսպորտային ոլորտներում:

19.01.2011թ. «ՆԱՍԴԱԶ ՕԵՄԷԸՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կողմից Ընկերության հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը ցուցակվել և ընդգրկվել են Բորսայի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում և թույլատրվել է առևտրի ցուցակված բաժնետոմսերի հասցեական գործարքների և ռեպո գործարքների հարթակներում:

Սկսած 2011թ.-ից Ընկերությունը հետևում է ՀՀ Կառավարության 30.12.2012թ. N 1769-Ա որոշմամբ հավանության արժանացած Կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներին:

2. Արտաքին աուդիտն իրականացնող անձը


Ընկերության աուդիտը իրականացնում է «ԹՄ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը:

«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ գտնվելու վայրն ՀՀ ք. Երևան 0014 Պ. Սևակ 8 Հեռ.՝ (374 60) 60 70 80, www.tmaudit.am: «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ այլ մասնագիտական միություններին չի անդամակցում:

3. Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Կառավարման մյուս մարմիններն են՝ խորհուրդը վերստուգող հանձնաժողովը և գլխավոր տնօրենը:

Ընկերությանը սահմանել է կառավարման մարմինների հետևյալ կառուցվածքը՝



Ընկերության խորհրդի քանակական կազմը սահմանված է 6 անդամից:

Ընկերության վերստուգող հանձնաժողովը կազմված է 3 անդամից:

Ընկերության կառավարման մարմինների անդամների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ներքոհիշյալ աղյուսակներում:

3.1. Խորհուրդ

Աղյուսակ 1

	Ազգանուն անուն հայրանուն	Բնակության (հաշվառման) վայրը	Զբաղեցրած պաշտոնը		Անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը
			ընկերությ ունում	փոխկապակցված ընկերությունում	
1	Հակոբյան Ռաֆայել Արմենի	ք. Երևան Աղասու փող. 2/5 Քանաքեռ Չեյթուն	Խորհրդի Նախագահ	«Նուռլոջիք» ՍՊԸ և «Ա-Ս փաուեր» ՍՊԸ տնօրեն	0
2	Հակոբյան Պարույր Հակոբի	ք. Երևան. Անտառային փող. 122/7 տուն	Խորհրդի անդամ, Գլխ. տնօրեն	«Մեղմ գեփյուն» ՍՊԸ և «Ջրասահք» ՍՊԸ- տնօրեն, «Արփա-Սևան» ԲՀ -հոգաբարձուների խորհրդի Նախագահ,	11 417 հատ / 55.8233 %
3	Նավասարդյան Կարինե Արշավիրի	ք. Երևան 2. Սարկավազի 123.36	Խորհրդի և Աուդիտի հանձնաժո ղովի անդամ		2673 հատ / 13.0696 %
4	Վարդանյան Չորիկ Հովհաննեսի	ք. Երևան Նորքի 8-րդ գանգ. 292 33բն	Խորհրդի անդամ, տնտեսագի տական բաժնի ղեկավար	«Արփա-Սևան» ԲՀ -հոգաբարձուների խորհրդի անդամ	34 հատ / 0.166
5	Պողոսյան Գոռ Միերի	ք. Երևան Քանաքեռ - Չեյթուն, Քանաքեռ 11 փող. 16 տուն	Խորհրդի անդամ, Աուդիտի հանձնաժո ղովի Նախագահ	-	0
6	Առաքելյան Մարտին Հրաչյայի	ք. Երևան Քանաքեռ - Չեյթուն, Քանաքեռ կյն. 30/1	Խորհրդի և Աուդիտի հանձնաժո ղովի անդամ	-	0

3.2. Վերստուգող հանձնաժողով

Աղյուսակ 2

	Ազգանուն անուն հայրանուն	Բնակության (հաշվառման) վայրը	Զբաղեցրած պաշտոնը		Անձին պատկանող ընկերության բաժնետոմսերի քանակը
			ընկերությունում	փոխկապակցված ընկերությունում	
1.	Հայկարամյան Անահիտ Աշոտի	ք. Երևան Գայի պողոտա 272. բն. 50	Առաջատար հաշվապահ	-	0
2.	Ալեքսանյան Սաթենիկ Վոլոդյայի	ք. Երևան Հր. Զոչար 252. 3 բն.	Ադմինիստրատիվ օգնական	-	0
3.	Սարյան Սուրեն Վլադիմիրի	ք. Երևան Թումանյան 39 բն. 10	-	-	0

- Վերջին հինգ տարվա ընթացքում ընկերության կառավարման մարմինների անդամների նկատմամբ դատական գործեր չեն հարուցվել պետական որևէ կառավարման մարմնի կողմից պատասխանատվության չեն ենթարկվել և առնչություն չեն ունեցել որևէ սնանկության լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացի հետ:
- Շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև բացակայում է:

4. Տեղեկություններ դուստր և փոխկապակցված անձանց վերաբերյալ

4.1. «Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը՝

- 15.06.2004թ. հիմնադրել է «Արփա-Սևան նախագիծ» փակ բաժնետիրական դուստր ընկերությունը: Հասցեն՝ 0012. ք. Երևան Վ. Վաղարշյան 20:

«Արփա-Սևան» ԲԲԸ տիրապետում է դուստր ընկերության բաժնային արժեթղթերի 100 տոկոսին:

«Արփա-Սևան» ԲԲԸ և «Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ կառավարման մարմինների անդամները փոխկապակցված անձիք չեն:

«Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ կառավարման մարմինների անդամները և նրանց հետ փոխկապակցված անձիք չեն հանդիսանում «Արփա-Սևան» ԲԲԸ բաժնետերեր:

- 23.08.2010թ. հիմնադրել է «Արփա-Սևան» Բարեգործական Հիմնադրամը: Հասցեն՝ 0012. ք. Երևան Վ. Վաղարշյան 20:

4.2. Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձիք են՝

1. «Բազենք» ՓԲԸ
2. «Ջրասահք» ՍՊԸ
3. «Մեղմ Չեփյուռ» ՍՊԸ
4. «Սի-լաբ» ՍՊԸ
5. «Ա-Ս փաուեր» ՍՊԸ
6. «Ա-Ս Ինվեսթմենթս» ՍՊԸ
7. «Նուռլոջիք» ՍՊԸ
8. «Այոթեք» ՍՊԸ
9. «Միքսել» ՍՊԸ

5. Խոշոր բաժնետերերը

Ընկերության խոշոր բաժնետերերն են՝

1. Հակոբյան Պարույր Հակոբի - տիրապետում է 11 417 հատ բաժնետոմսի, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 55.82 %-ը:

2. Նավասարդյան Կարինե Արշավիրի - տիրապետում է 2673 հատ բաժնետոմսի, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 13.07 % -ը:

Բոլոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանչյուրը տալիս են ձայնի միևնույն իրավունքը:

6. Աշխատակիցները

Ընկերության աշխատակիցների վերջին չորս տարվա միջին թվաքանակի վերաբերյալ տվյալները, առանց կապալային կամ քաղաքացիական իրավական պայմանագրի հիման վրա աշխատանք կատարողների, ներկայացված են թիվ -3 աղյուսակում:

Աղյուսակ 3

	Տարեթվերը			
	2019թ	2020թ	2021թ	2022թ
Աշխատողների միջին տարեկան թվաքանակը մարդ	313	189	188	206
որից ղեկավարներ	40	35	33	34

7. Արտոնագրեր և լիցենզիաներ

1. ՀՀ Զաղաքաշինության նախարարություն **ԼԻՑԵՆԶԻԱ 7496**

ԶԱՂԱՔԱՇԻՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԾԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (Բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 01

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը՝ անժամկետ

1.2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 02
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը՝ անժամկետ

1.3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 03
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը՝ անժամկետ

1.4. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 04
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը՝ անժամկետ

1.5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 05
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԿԱՊԻ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը՝ անժամկետ

2. ՀՀ Զաղաքաշինության կոմիտե ԼԻՑԵՆԶԻԱ 17047

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

/ Բացառությամբ կոնստրուկտորական մասի ինչպես նաև շինարարության
թույլտվություն չպահանջող աշխատանքների/
Տրված է 22.03.2019թ. գործողության ժամկետը՝ անժամկետ

2.1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 17 047 - 2
ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՈՒՑՄԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ
Տրված է 22.03.2019թ. գործողության ժամկետը՝ անժամկետ

2.2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 17047 - 4
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ
Տրված է 22.03.2019թ. գործողության ժամկետը՝ անժամկետ

2.3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 17047 - 6
ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝
ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ և ՀԱՄԱԿԱՐԳԵՐ
Տրված է 22.03.2019թ. գործողության ժամկետը՝ անժամկետ

**3. Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԼԻՑԵՆԶԻԱ**

ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ, ՊԱՅԹԵՑՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ
ՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊՆՊՍԱՊԱ N 32
Տրված է 11.02.2013թ., գործողության ժամկետը՝ անժամկետ:

**4. ՄՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՉԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՓԲԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ N 001/Q-003-0008-2020**

Բնակելի, հասարակական և արտադրական, տրանսպորտային, հիդրոտեխնիկական, էներգետիկ, կապի ոլորտներում շինարարության, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների և պայթեցման աշխատանքների նկատմամբ ներդրված որակի կառավարման համակարգը համապատասխանում է

ԻՍՕ 9001:2015

«Որակի կառավարման համակարգեր» միջազգային ստանդարտի պահանջներին:
Տրված է 08.12.2020թ. ուժի մեջ է մինչև 08.12.2023թ.

**5. ՄՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՉԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՓԲԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ N 001/F-003-0001-2020**

Բնակելի, հասարակական և արտադրական, տրանսպորտային, հիդրոտեխնիկական, էներգետիկ, կապի ոլորտներում շինարարության, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների և պայթեցման աշխատանքների նկատմամբ ներդրված որակի կառավարման համակարգը համապատասխանում է

ԻՍՕ 14001:2015

«Որակի կառավարման համակարգեր» միջազգային ստանդարտի պահանջներին:
Տրված է 08.12.2020թ. ուժի մեջ է մինչև 08.12.2023թ.

**6. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ
Սերտիֆիկատի գրանցման համար No. 9155341**

Շինարարական, արտադրական, շահագործման, հիդրո-տեխնիկական կառույցներում հորատման և պայթեցման աշխատանքների, էներգետիկ համակարգերի և թունելների նկատմամբ ներդրված որակի կառավարման համակարգը համապատասխանում է

ԻՍՕ 45001:2018

«Որակի կառավարման համակարգեր» միջազգային ստանդարտի պահանջներին:
Տրված է 20.11.2020թ. ուժի մեջ է մինչև 19.11.2023թ.

**8. Բիզնեսի արդյունքների նկարագիրը
Հիմնական գործունեությունը և շուկաները**

2022թ. ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքների, վաճառքից, մատուցված ծառայությունների իրացումից հասույթը և այլ եկամուտների գումարը կազմել է՝ 3 448 994 հազ.դր., որոնց վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են թիվ 4 աղյուսակում:

Աղյուսակ 4

1	Աշխատանքների կատարումից հասույթ	2 826 470
2	Արտադրանքի և ապրանքների վաճառքից հասույթ	230 318
3	Ծառայությունների մատուցումից հասույթ	316 571
4	Գործառնական այլ եկամուտներ	75 635

Ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքները և մատուցած ծառայությունները իրացվում են ներքին շուկայում:

9. Հիմնական միջոցները

31.12.2022թ. դրությամբ ընկերության հիմնական միջոցների արժեքը կազմել է 5 521 844 հազ. դր., կուտակված մաշվածությունը՝ 2 586 003 հազ. դր., հաշվեկշռային արժեքը՝ 2 935 841 հազ. դր.: Հիմնական միջոցների ընդհանուր մաշվածությունը կազմել է 46.8 %:

Ըստ առանձին դասերի հիմնական միջոցների արժեքի հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5
հազ. դր.

Դասի անվանումը	Արժեքը	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեքը	Մաշվածքը %
Շենքեր և կառուցվածքներ	593 727	52 545	541 182	8,9
Մեքենա - սարքավորումներ	2 986 678	1 433 238	1 553 440	48,0
Տրանսպորտային միջոցներ	1 442 435	980 180	462 255	68,0
Արտադրական և տնտեսական գույք	77 064	69 060	8 004	89,6
Այլ հիմնական միջոցներ	58 295	50 980	7 315	87,5
Հողամասեր	363 645		363 645	
Ընդամենը հիմնական միջոցներ 31.12.2022թ.	5 521 844	2 586 003	2 935 841	46,8

Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են՝

Ընդամենը հիմնական միջոցներ 31.12.2021թ.	5 187 043	2 466 410	2 720 633	47,5
Նախորդ տարվա համեմատ ածը	334 801	119 593	215 208	

Վերջին հինգ տարիների ընթացքում Ընկերության կողմից ձեռք բերված հիմնական միջոցների և արդիականացման վրա կատարված ծախսերի վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6
հազ.դր.

Հիմնական միջոցների դասը	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Մեքենաներ և սարքավորումներ	194 183.5	29 311.7	121 943	104 661.2	288 007
Տրանսպորտային միջոցներ	32 094.8	2 916.7	34 114	0	0
Այլ հիմնական միջոցներ	13 512.8	23 057.1	23 767	6 795.5	9 839

Ընդամենը	239 791.1	55 285.6	179 824	111 453.7	297 847
----------	-----------	----------	---------	-----------	---------

Ընկերության տրամադրության տակ գտնվող էական մեծություն կազմող հիմնական միջոցը՝ դա ք. Երևան Վ.Վաղարշյան 20 հասցեում գտնվող 1840.1 քառ. մ. տարածքով չորս հարկանի վարչական շենքն է, որի հաշվեկշռային արժեքը իր զբաղեցրած հողատարածքի հետ միասին կազմում է 470 213.9 հազ.դրամ:

Ընկերությանը պատկանող էական մեծություն չկազմող, բայց Ընկերության համար կարևոր նշանակություն ունեցող շենքերից շինություններից և հողատարածքներից են՝

- ք. Երևան, Արտաշիսյան -106/1 հասցեում գտնվող 903.2ք.մ. անշարժ գույքը 0.60637 հա հողատարածքով, որի հաշվեկշռային արժեքը իր զբաղեցրած հողատարածքի հետ միասին կազմում է 107 178.8 հազ.դրամ: Նշված գույքը օգտագործվում է ընկերության ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման, վերանորոգման արհեստանոցների և պահեստների համար;
- ք. Երևան, Արտաշեսյան 100/17 հասցեում գտնվող 1606.7ք.մ. անշարժ գույքը 1.78845 հա հողատարածքով, որի հաշվեկշռային արժեքը իր զբաղեցրած հողատարածքի հետ միասին կազմում է 242 565,3 հազ.դրամ: Նշված գույքը, որը օգտագործվում է որպես ապրանքանյութական արժեքների պահեստավորման բազա, վերանորոգման արհեստանոց, քետոնի պատրաստման արտադրամաս:

Բոլոր հիմնական միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Ընկերությանը:

Սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող գույքից վարկային և բանկային երաշխիքների պայմանագրով սահմանված, որպես պարտավորությունների կատարման երաշխիք գրավադրված են՝

- ք. Երևան, Վ.Վաղարշյան 20 հասցեում գտնվող վարչական շենքը;
- ք. Երևան, Արտաշեսյան 100/17 և Արտաշիսյան 106/1 հասցեում գտնվող արտադրական նշանակության անշարժ գույքերը, ինչպես նաև ընկերությանը պատկանող թվով 21 շինարարական մեքենա-սարքավորումները և տրանսպորտային միջոցները:
- Ընկերության խոշոր բաժնետեր Պարույր Հակոբյանին պատկանող 55,82 տոկոս կազմող՝ 11,417 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը:

Գրավադրված հիմնական միջոցների օգտագործման սահմանափակումները կայանում են նրանում, որ առանց գրավառուի համաձայնության ընկերությունը չի կարող այլ տեղ գրավ դնել, վարձակալության հանձնել կամ օտարել այդ հիմնական միջոցները:

10. Ֆինանսական վերլուծություն

10.1. Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծություն

Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծությունը իրականացնելու համար ընկերության հաշվեկշիռը ներկայացվում է ներքոհիշյալ տեսքով՝

Աղյուսակ 7

Ցուցանիշների անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին		Նախորդ ժամանակաշրջանի վերջին		Աճը հազ.դր.	Աճի տեմպը %
	հազ.դր.	%	հազ.դր.	%		

1.Ակտիվներ	7 455 221	100,0	5 905 678	100,0	1 549 543	126,2
1.1. Ոչ ընթացիկ ակտիվներ	4 302 328	57,7	3 948 148	66,9	354 180	109,0
1.2.Ընթացիկ ակտիվներ	3 152 893	42,3	1 957 530	33,1	1 195 363	161,1
1.2.1. Պաշարներ	1 093 167	14,7	820 517	13,9	272 650	133,2
1.2.2.Դեբիտորական պարտքեր	845 704	11,3	1 121 613	19,0	-275 909	75,4
1.2.3.Դրամական միջոցներ	1 214 022	16,3	15 400	0,3	1 198 622	7883,3
2.Պասիվներ	7 455 221	100,0	5 905 678	100,0	1 549 543	126,2
2.1.Սեփական կապիտալ	4 375 941	58,7	4 359 527	73,8	16 414	100,4
2.2.Փոխառու կապիտալ	3 079 280	41,3	1 546 151	26,2	1 533 129	199,2
2.2.1. Ոչ ընթացիկ պարտավորություններ	231 838	3,1	292 351	5,0	-60 513	79,3
2.2.2. Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	556 447	7,5	272 799	4,6	283 648	204,0
2.2.3.Կրեդիտորական պարտք	2 290 995	30,7	966 584	16,4	1 324 411	237,0

Նախորդ տարվա համեմատ Ընկերության հաշվեկշռի ինչպես ակտիվների, այնպես էլ պասիվների կառուցվածքում և դրանց փոփոխության դինամիկան բնութագրող ցուցանիշների արժեքներում տեղի են ունեցել էական փոփոխություններ, մասնավորապես՝

1. Ընկերության ակտիվները բացարձակ արժեքով նախորդ տարվա համեմատ աճել են 1 549 543 հազ. դր., կամ 26.2 % և հաշվետու ժամանակահատվածի վերջում կազմել՝ 7 455 221 հազ. դրամ :

Նշված աճը, նախորդ տարվա համեմատ, հիմնականում տեղի է ունեցել.

- Ոչ ընթացիկ ակտիվների 354 180 հազ.դր., կամ 9 % աճով, մասնավորապես՝ հիմնական միջոցների 215 208 հազ.դր. կամ 7.9 % աճով, և փոխառությունների 139 812 հազ.դր. կամ 11.7 % աճով:
- Ընթացիկ ակտիվների՝ 1 195 363 հազ.դր. կամ 61.1 % աճով:

Ընթացիկ ակտիվների աճը տեղի է ունեցել բացառապես 28.12.2022թ. ընկերության հաշվին մուտքագրված 1 391 868.5 հազ.դր. աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված կանխավճարի գումարի հաշվին:

2. Պասիվների կառուցվածքում և դրանց դինամիկան բնութագրող ցուցանիշներում, սեփական կապիտալի բացարձակ արժեքով ոչ էական փոփոխության պայմաններում՝ նախորդ տարվա համեմատ, փոխառու կապիտալի գումարը աճել է 1 533 129 հազ.դր., կամ 99.2 % և կազմել՝ 3 079 280 հազ.դր.:

Ընկերության պարտավորությունների աճը նախորդ տարվա համեմատ պայմանավորված է.

- Ընթացիկ ֆինանսական պարտավորությունների նախորդ տարվա համեմատ

283 648 հազ.դր., կամ 104 % աճով:

- Կրեդիտորական պարտավորությունների՝ նախորդ տարվա համեմատ՝ 1 324 411 հազ.դր., կամ 137 % աճով:

10.2. Ֆինանսական կայունության վերլուծություն

Ֆինանսական կայունության վերլուծությունը կատարվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

10.2.1. Ֆինանսական անկախության գործակից:

$$Q_1 = 4\,375\,941 / 7\,455\,221 = 0,59$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5: Ցուցանիշի 0.59 արժեքը ցույց է տալիս, որ ընկերությունն իր գործունեությունը հիմնականում ֆինանսավորում է սեփական կապիտալի հաշվին:

10.2.2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից:

$$Q_2 = 3\,079\,280 / 4\,375\,941 = 0,7$$

Ցուցանիշի 0.7 արժեքը ցույց է տալիս որ ընկերության պարտավորությունները սեփական կապիտալի միավորի հաշվով գտնվում են ցածր մակարդակում:

10.2.3. Ինքնավարության գործակից:

$$Q_3 = 4\,607\,779 / 7\,455\,221 = 0,62$$

Ինքնավարության գործակցի 0.62 արժեքը ցույց է տալիս, որ Ընկերության միջոցների հիմնական մասը ձևավորվել է երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հիմնականում՝ սեփական կապիտալի հաշվին:

10.2.4. Գործող կապիտալ:

$$Q_4 = 3\,152\,893 - 2\,847\,442 = 305\,451$$

Գործող կապիտալի արժեքը ցույց է տալիս, որ ընթացիկ ակտիվները ապահովված են սեփական կապիտալով:

10.2.5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$$Q_5 = 305\,451 / 3\,152\,893 = 0,1$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.1:

10.2.6. Պաշարների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$$Q_6 = 305\,451 / 431\,134 = 0,71$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:

10.2.7. Սեփական կապիտալի մանևրայնության գործակից:

$$Q_7 = 305\,451 / 4\,375\,941 = 0,07$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5: Ցուցանիշի 0.07 արժեքը ցույց է տալիս որ ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցները ամբողջությամբ չեն օգտագործվում:

10.2.8. Գույքի ռեալ արժեքի գործակից:

$$Q_8 = 3\,385\,943 / 7\,455\,221 = 0,45$$

Այս ցուցանիշի 0.45 արժեքը (ընդունելի փոքրագույն արժեքը 0.5) ցույց է տալիս որ ընկերության արտադրական պոտենցիալը գտնվում է ոչ բավարար վիճակում:

10.3. Հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն

իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են՝

10.3.1. Ընթացիկ իրացվելիության գործակից

$$Q_9 = 3\,152\,893 / 2\,847\,442 = 1,11$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը՝ 1.11 ցույց է տալիս որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ամբողջությամբ ապահովված չեն ընթացիկ ակտիվներով:

10.3.2. Արագ իրացվելիության գործակից:

$$Q_{10} = 2\,721\,759 / 2\,847\,442 = 0,96$$

Այս ցուցանիշի սահմանային փոքրագույն արժեքը 1 է:

Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը և ցույց է տալիս որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ըստ էությանմբ ապահովված են առավել իրացվելի ակտիվներով:

10.3.3. Բացարձակ իրացվելիության գործակից:

$$Q_{11} = 1\,214\,022 / 2\,847\,442 = 0,43$$

Այս գործակցի ցանկալի արժեքը ընկած է 0.2-0.5 թվերի սահմաններում:

10.4. Ֆինանսական արդյունքների վերլուծություն

Ընկերության ֆինանսական արդյունքների և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

Ցուցանիշների անվանումը	2022թ.		2021թ.		աճը	աճի տեսլը
	հազ.դր	%	հազ.դր	%		
Հասույթ	3 365 081	100	3 748 614	100	-383 533	89,8
Վաճառքի ինքնարժեք	3 174 538	94,3	3 547 271	94,6	-372 733	89,5
Համախառն շահույթ	190 543	5,7	201 343	5,4	-10 800	94,6
Այլ եկամուտներ	75 635	2,2	59 862	1,6	15 773	126,3
Իրացման ծախսեր	90	0,0	210	0,0	-120	42,9
Վարչական ծախսեր	169 406	5,0	165 743	4,4	3 663	102,2

Գործառնական այլ ծախսեր	81 288	2,4	67 311	1,8	13 977	120,8
Գործառնական գործունեությունից շահույթ	15 394	0,5	27 941	0,7	-12 547	55,1
Ֆինանսական եկամուտներ	152 150	4,5	144 261	3,8	7 889	105,5
Ֆինանսական ծախսեր	93 483	2,8	62 895	1,7	30 588	148,6
Ֆինասական ակտիվների արժեզրկումից կորուստներ (հակադարձումից օգուտներ)	20 028	0,6	-1 108	0,0		
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	-2 459	-0,1	652	0,0	-3 111	-377,1
Շահույթը մինչև հարկումը	91 630	2,7	108 851	2,9	-17 221	84,2
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	5 565	0,2	2 184	0,1	3 381	254,8
Շահույթը հարկումից հետո	97 195	2,9	111 035	3,0	-13 840	87,5
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	97 195	2,9	111 035	3,0	-13 840	87,5
որից մայր կազմակերպության սեփականատերերին	97 195	2,9	111 035	3,0	-13 840	87,5
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	4,75		5,43			87,5

Ինչպես երևում է Ընկերության ֆինանսական արդյունքների և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալների ներկայացված աղյուսակից, նախորդ տարվա համեմատ տեղի են ունեցել որոշակի էական փոփոխություններ, մասնավորապես՝

Կատարված աշխատանքների մատուցած ծառայությունների իրացումից հասույթը նախորդ տարվա 3 748 614 հազ.դր. համեմատ՝ հաշվետու տարում սվազել է 383 533 հազ.դր.-ով և կազմել՝ 3 365 081 հազ.դր.: Իրացված արտադրանքի, աշխատանքների ծառայությունների ինքնարժեքը կազմել է 3 174 081 հազ.դր., որի տեսակարար կշիռը հասույթից կազմել է 94,3 %, նախորդ տարվա 94,6 % համեմատ:

Արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության գործառնական գործունեությունից համախառն շահույթը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սվազել է 10 800 հազ.դր. և կազմել՝ 190 543 հազ.դր.:

Նախորդ տարվա համեմատ՝ 15 773 հազ. դր., կամ 26,3 %-ով աճել են գործառնական այլ եկամուտները (պաշարների և հիմնական միջոցների վաճառք, գործառնական վարձակալություն և այլն) և կազմել են՝ 75 635 հազ.դր.:

Գործառնական ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 13 977 հազ. դր., կամ 20, 8 %-ով և կազմել են՝ 81 288 հազ.դր.:

Ֆինանսական եկամուտները կազմել են 172 178 հազ.դր., ծախսերը՝ 95 942 հազ.դր.:

Շահույթը հարկումից հետո կազմել է 97 195 հազ.դր.:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը կազմել է 4750 դրամ:

10.5. Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության

վերլուծություն

Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծությունը թույլ է տալիս գնահատել, թե որքանով է Ընկերությունը արդյունավետ օգտագործում իր միջոցները:

Վերլուծության այս փուլում առանձնացվում են հետևյալ ցուցանիշները՝

1. Շրջանառելիության ցուցանիշներ
2. Շահութաբերության ցուցանիշներ

10.6. Ակտիվների շրջանառելիության վերլուծություն

Շրջանառելիության գործակիցների արժեքները և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

	Ցուցանիշների անվանումը	Շրջանառելիության գործակիցների			
			Արժեքները		Փոփոխության տեմպը %
			2022թ.	2021թ.	
1	Ակտիվների շրջանառելիության գործակից	Գ ₁₂	0,50	0,66	75,8
2	Սեփական կապիտալի շրջանառելիության գործակից	Գ ₁₃	0,77	0,86	89,5
3	Արտադրության միջոցների շրջանառելիության գործակից	Գ ₁₄	1,03	1,19	86,6
4	Հիմնական միջոցների շրջանառելիության կամ ֆոնդահատույցի գործակից	Գ ₁₅	1,19	1,4	85,0
5	Ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակից	Գ ₁₆	1,32	2,01	65,7
5.1	Ընթացիկ ակտիվների շրջապտույտի տևողությունը օրերով	Գ ₁₇	273	179,1	
6	Գործող կապիտալի շրջանառելիության գործակից	Գ ₁₈	6,67	5,27	126,6
6.1	Գործող կապիտալի շրջապտույտի տևողությունը օրերով	Գ ₁₉	54	68,3	
7	Պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակից	Գ ₂₀			
8	Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից:	Գ ₂₁	2,23	2,68	83,2

8.1	Դեբիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը՝	Գ ₂₂	161	134,3	
9	Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	Գ ₂₃	2,06	3,96	52,02
9.1	Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը օր	Գ ₂₄	175	90,9	192
10	Պաշարների շրջանառելիության գործակից	Գ ₂₅	8	8,39	93

10.7. Շահութաբերության վերլուծություն

Կապիտալի շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշների արժեքները և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

Շահութաբերության գործակիցների՝					
	Ցուցանիշների անվանումը		Արժեքները		Աճի տեմպը
			2022թ.	2021թ.	%
1	Ակտիվների շահութաբերության գործակից	Գ ₂₆	0,0145	0,0194	74,7
2	Սեփական կապիտալի շահութաբերության գործակից	Գ ₂₇	0,0223	0,0256	87,1
3	Իրացման շահութաբերության գործակից	Գ ₂₈	0,0289	0,0296	97,6
4	Ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակից	Գ ₂₉	0,0308	0,0567	54,3

11. Շահույթի բաշխումը և կանխատեսումը

Վերջին հինգ տարվա ընթացքում Ընկերության գուտ շահույթի օգտագործման և շահութաբաժինների վճարմանն ուղղված գումարի վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ 11-ում:

Ցուցանիշների անվանումը	Տարեթվերը				
	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
Զուտ շահույթը	889 356	497 321	530 775	72 644	111 035
Շահութաբաժինների վճարմանն ուղղվող գումարը	306 780	153 390	51 130	51130	51130
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	43.49	24.3	2.5	3,55	5,43

Նախատեսվում է 2022թ. շահութաբաժինների վճարման համար օգտագործել 51 130 հազ.դր.:



Գլխավոր տնօրեն՝

Պարույր Հակոբյան

Կատարող՝ Չորիկ Վարդանյան
հեռ./012/ 21 11 11 (138)

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Համախմբված ֆինանսական հաշվետվություններ	
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Արփա-Սևան» ԲԲԸ-ի բաժնեգրերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերության և իր դուստր կազմակերպության (այսուհետ՝ Խումբ) կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2022թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական արդյունքը և համախմբված դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍԽ կանոնագիրը) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարցեր

Առանցքային աուդիտորական հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք որոշել ենք, որ առկա չեն առանցքային աուդիտորական հարցեր, որոնք անհրաժեշտ էր ներկայացնել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլնորանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:


Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններին օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպություններին կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ղեկավարությանը նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:



Թաթուլ Մովսիսյան

Գլխավոր տնօրեն/Առաջադրանքի ղեկավար

18 ապրիլի, 2023թ.,
ք.Երևան, Պ.Սևակ 8



«Արփա-Սևան» ԲԲԸ
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

‘000 դրամ

	Ծանոթ.	31/12/22	31/12/21
Ակտիվ			
Հիմնական միջոցներ	8	2,935,841	2,720,633
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	9	18,968	25,291
Ոչ նյութական ակտիվներ		2,328	5,161
Փոխառություններ	10	1,333,932	1,194,120
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		11,259	2,943
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		4,302,328	3,948,148
Պաշարներ	11	431,134	433,028
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	12	662,033	387,489
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	13	800,011	1,064,746
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային ակտիվ		-	5,316
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	21	1,412	916
Փոխառություններ	10	26,107	41,198
Դրամական միջոցներ	14	1,214,022	15,400
Այլ ընթացիկ ակտիվներ	15	18,174	9,437
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		3,152,893	1,957,530
Ընդամենը ակտիվներ		7,455,221	5,905,678
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	16	51,130	51,130
Վերագնահատումից արժեքի աճ	16	348,053	444,498
Զբաղիված շահույթ	16	3,916,178	3,803,319
Պահուստային կապիտալ	16	60,580	60,580
Ընդամենը սեփական կապիտալ		4,375,941	4,359,527
Վարկեր	17	68,366	212,132
Ակտիվներին վերաբերող շնորհներ		890	1,497
Վարձակալության գծով պարտավորություններ	19	94,216	19,560
Հետաձգված հարկային պարտավորություններ	28	68,366	59,162
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		231,838	292,351
Վարկեր	17	553,007	272,799
Փոխառություններ	18	3,440	-
Վարձակալության գծով պարտավորություններ	19	120,883	26,027
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	20	157,546	154,265
Կանխավճարներ ծառայությունների համար		1,579,733	647,402
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային պարտավորություն		3,208	-
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ	21	257,364	57,227
Աշխատավարձի և այլ կարճ.հատուց-ի գծով պարտ-ություններ	22	86,299	58,549
Շահաբաժնի գծով պարտավորություններ	23	69,551	36,829
Այլ պարտավորություններ	24	16,411	702
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		2,847,442	1,253,800
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		7,455,221	5,905,678



Գլխավոր տնօրեն
 Գլխավոր հաշվապահ

[Handwritten signature]

Պարույր Հակոբյան
 Սեղա Փարսյան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին
համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

‘000 դրամ	Ծանոթ.	2022	2021
Հասույթ	25	3,365,081	3,748,614
Վաճառքի ինքնարժեք	25	(3,174,538)	(3,547,271)
Համախառն շահույթ		190,543	201,343
Այլ եկամուտներ	26	75,635	59,862
Իրացման ծախսեր		(90)	(210)
Վարչական ծախսեր		(169,406)	(165,743)
Այլ ծախսեր	26	(81,288)	(67,311)
Գործառնական շահույթ		15,394	27,941
Ֆինանսական եկամուտներ	27	152,150	144,261
Ֆինանսական ծախսեր	27	(93,483)	(62,895)
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ (հակադարձումից օգուտներ)	10,13	20,028	(1,108)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(2,459)	652
Շահույթ մինչև հարկումը		91,630	108,851
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	28	5,565	2,184
Զուտ շահույթ		97,195	111,035
-որից մայր կազմակերպության սեփականատերերին		97,195	111,035
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	29	4,75	5,43
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	29	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների հանրագումար		97,195	111,035
-որից մայր կազմակերպության սեփականատերերին		97,195	111,035



Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Պարույր Հակոբյան

Սեդա Փարսյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

‘000 դրամ

	Ծա- նոթ.	Կանոնա- դրական կապիտալ	Վերագնա- հատումից արժեքի աճ	Չբաշխված շահույթ	Պահուս- տային կապիտալ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	16	51,130	577,197	3,636,527	60,580	4,325,434
Զուտ շահույթ (վնաս)		-	-	111,035	-	111,035
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-	-	-
<i>Համապարփակ ֆինանսական արդյունքների հանրագումար՝ առանց հարկերի</i>		-	-	111,035	-	111,035
Շահաբաժին		-	-	(51,130)	-	(51,130)
Ֆինանսական գործիքների սկզբնական չափումից վնաս		-	-	(25,812)	-	(25,812)
Ներքին շարժեր		-	(132,699)	132,699	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.		51,130	444,498	3,803,319	60,580	4,359,527
Զուտ շահույթ (վնաս)		-	-	97,195	-	97,195
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-	-	-
<i>Համապարփակ ֆինանսական արդյունքների հանրագումար՝ առանց հարկերի</i>		-	-	97,195	-	97,195
Շահաբաժին		-	-	(51,130)	-	(51,130)
Ֆինանսական գործիքների սկզբնական չափումից վնաս		-	-	(29,651)	-	(29,651)
Ներքին շարժեր		-	(96,445)	96,445	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.		51,130	348,053	3,916,178	60,580	4,375,941



Փխավոր տնօրեն

Փխավոր հաշվապահ

Պարույր Հակոբյան

Սեդա Փարսյան

‘000 դրամ	Ծանոթ.	2022	2021
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
արտադրանքի, ապրանքների, ծառայությունների վաճառքից	25	5,341,008	4,013,784
այլ ներհոսքեր		7,092	17,779
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	20	(3,246,134)	(3,283,422)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	22	(652,628)	(497,916)
շահութահարկի վճարումից	28	-	(10,223)
այլ հարկերի, պարտադիր վճարների վճարումից	21	(121,091)	(217,687)
այլ արտահոսքեր		(106,140)	(113,215)
Գործառնական գործունեությունից դրամական զույգ հոսքեր		1,222,108	(90,900)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
հիմնական միջոցների վաճառքից	8	27,357	6,450
տրված փոխառությունների մարումից	10	33,315	81,647
տոկոսների ստացումից	27	243	2,498
հիմնական միջոցների ձեռքբերումից	8	(72,471)	(119,330)
փոխառությունների տրամադրումից	10	(11,112)	(60,980)
Ներդրումային գործունեությունից դրամական զույգ հոսքեր		(22,668)	(89,715)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
վարկերի և փոխառությունների ստացումից	17,18	1,104,950	966,957
վարկերի և փոխառությունների մարումից	17,18	(967,084)	(708,897)
վարձակալության պարտավորությունների մարումից		(27,900)	(1,890)
տոկոսների վճարումից	27	(88,808)	(60,692)
շահաբաժինների վճարումից	23	(20,399)	(18,908)
Ֆինանսական գործունեությունից դրամական զույգ հոսքեր		760	176,570
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		1,200,198	(4,045)
արտաբյուջեի փոխարժեքային տարբերություններ		(1,576)	(684)
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի		15,400	20,129
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի		1,214,022	15,400

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Պարույր Հակոբյան

Սեդա Փարսյան

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Նկարագիր և գործունեություն

«Արփա-Սևան» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 1969թ, որպես «ԱրփաՍևանՇին» շինարարական կազմակերպություն: 1995թ.-ին վերակազմավորվել է որպես «Արփա-Սևան» ՓԲԸ, իսկ 1998թ.-ին՝ «Արփա-Սևան» ԲԲԸ:

Ընկերությունը ունի մեկ դուստր կազմակերպություն՝ «Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ (100% բաժնեմաս), չունի ասոցիացված կազմակերպություններ և համատեղ ձեռնարկում: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ընդգրկում են Ընկերությունը և իր դուստր կազմակերպությունը (այսուհետ՝ Խումբ):

Ընկերության գործունեության հիմնական տեսակները՝

- ջրանցքների և ոռոգման համակարգերի կառուցում և կապիտալ հիմնանորոգում,
- ստորգետնյա կառույցների շինարարություն,
- հորատման և պայթեցման աշխատանքներ,
- շենքերի, շինությունների կառուցապատման, վերանորոգման աշխատանքներ:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2022թ. 206 անձ է, իսկ 2021թ.՝ 188:

Իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Վ.Վաղարշյան 20, որտեղ տեղակայված է վարչական գրասենյակը: Ավտոտրանսպորտային ծառայությունը և կենտրոնական պահեստը գտնվում են ք.Երևան, Արտաշիսյան 105 և Արտաշիսյան 106 հասցեներում: Շինարարական աշխատանքները հիմնականում իրականացվել են Երևանում, Վայոց Ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռի, Արագածոտնի և Արմավիրի մարզերում:

1.2. Կորպորատիվ կառուցվածք

Կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Խմբի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրվել են դիրեկտոր խորհուրդ և վերստուգող հանձնաժողով: Խմբի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը: 31.12.2021թ. (31.12.2020թ.) դրությամբ՝

Բաժնետերեր	Բաժնեգրույնների քանակ		Ձայների տեսակարար կշիռը (%)
	2021թ.	2020թ.	
Ընդամենը, այդ թվում	20,452	100	
Պարույր Հակոբյան	11,417	55.79	
Կարինե Նավասարդյան	2,673	13.07	

2. ՖՀՄՍ-ներին համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

«Արժույթը» Արժույթն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

4.1. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հիմնական միջոցների: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա: Վերագնահատված հիմնական միջոցները հաշվառվել են վերագնահատված գումարով:

4.2. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

- ա) ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ:
- բ) շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին մեկ համախմբված հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Խումբը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը:
- գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար:
- դ) դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:
- ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Խումբը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

4.3. Համախմբման հիմունքներ**Համախմբված ֆինանսական հաշվետվությունների շրջանակ**

Խումբը համախմբում է բոլոր դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, որոնք գործում են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում:

Դուստր է այն կազմակերպությունը, որը վերահսկվում է Ընկերության կողմից: Խումբը վերահսկողություն ունի ներդրման օբյեկտի (դուստր կազմակերպության) նկատմամբ, երբ ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում նա ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն:

Համախմբման ընթացակարգեր

Խումբը պատրաստում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ՝ միանման գործարքների և նույն հանգամանքներում տեղի ունեցող այլ դեպքերի համար օգտագործելով հաշվապահական հաշվառման միօրինակ քաղաքականություն:

Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է նրա նկատմամբ Ընկերության (մայր կազմակերպության) կողմից վերահսկողություն ձեռք բերելու ամսաթվից և դադարում է՝ ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի (մայր կազմակերպության) վերահսկողությունը կորցնելուն պես: Դուստր կազմակերպության եկամուտներն ու ծախսերը հիմնված են լինում ակտիվների և պարտավորությունների՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա:

Չվերահսկող բաժնեմասերը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են սեփական կապիտալում՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Ընկերության և դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները համախմբվում են տող առ տող՝ գումարելով ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի համապատասխան հոդվածները:

Որպեսզի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնեն ֆինանսական տեղեկատվություն խմբի, որպես մեկ կազմակերպության համար, կատարվում են հետևյալ քայլերը՝

- ա) համախմբվում են մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների, ծախսերի և դրամական հոսքերի նմանատիպ հոդվածները:
- բ) հաշվանցվում է (բացառվում է) յուրաքանչյուր դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության ներդրման հաշվեկշռային արժեքը և յուրաքանչյուր դուստր կազմակերպության սեփական կապիտալում մայր կազմակերպության բաժինը:

- գ) ամբողջությամբ բացառվում են ներխմբային ակտիվները և պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտը, ծախսերը և դրամական հոսքերը, որոնք վերաբերում են խմբում ընդգրկված կազմակերպությունների միջև գործարքներին (ներխմբային գործարքներից առաջացող շահույթը կամ վնասը, որը ճանաչվել է ակտիվներում, օրինակ, պաշարներում և հիմնական միջոցներում, բացառվում է ամբողջությամբ):

4.4. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր), որի սկզբնական արժեքը հիմնական միջոցի ամբողջ արժեքում էական է, կամ ունի տնտեսական օգուտների սպառման նշանակալիորեն տարբեր մոդել, կամ ունի նշանակալիորեն տարբեր օգտակար ծառայություն, հաշվառվում է որպես առանձին միավոր:

Հիմնական միջոցի միավորի սկզբնավորման արժեքը բաշխում է ըստ դրա հիմնական բաղադրիչների: Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները առանձնացնելուց հետո հիմնական միջոցի միավորի մնացած մասը ևս հաշվառվում է որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ (հիմնական միջոցի միավորի մնացորդային հիմնական բաղադրիչ): Որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ առանձին հաշվառվում է նաև հիմնական միջոցի միավորի անսարքությունների առկայության վերաբերյալ կանոնավոր լայնածավալ ստուգումների իրականացման ծախսումները (արժեքը), ինչպես նաև հիմնական միջոցի միավորի կանոնավոր լայնածավալ կապիտալ վերանորոգումների ծախսումները (արժեքը):

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Չափումը ճանաչման պահին

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, պետք է չափվի իր սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է: Երբ վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է, անհապաղ վճարման գնի համարժեքի և ընդհանուր վճարումների տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային ծախս՝ հետաձգված ժամկետի ընթացքում, բացառությամբ եթե նշված տոկոսային ծախսումը կապիտալացվում է:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված գումարը իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը վերագնահատվում է, այդ ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատման արդյունքներին համապատասխան: Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը ճշգրտվում է այնպես, որ այն հավասար լինի ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերությանը՝ արժեզրկումից կուտակված կորուստները հաշվի առնելուց հետո:

Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճն ուղղակիորեն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում: Եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր շահույթում կամ վնասում: Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, նվազումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում այն գումարի չափով, որը չի գերազանցում այդ ակտիվների գծով վերագնահատումից արժեքի աճի առկա կրեդիտային մնացորդը: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված նվազումը պակասեցնում է սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում կուտակված գումարը:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- ա) ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,
- բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,
- գ) տեխնիկական հնացածությունը,
- դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Խումբը հիմնական միջոցների նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունները.

Շենքեր	40-60 տարի
Կառուցվածքներ	20-40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	6-11 տարի
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	5-8 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	3 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի

Հողամասը ունի անսահմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար դրա համար մաշվածություն չի հաշվարկվում:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հեղազա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները: Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Հիմնական միջոցների փոխարինվող մասերը ենթակա են ապաճանաչման: Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապաճանաչվի, երբ՝

- ա) այն օտարվում է, կամ
- բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

4.5. Ոչ նյութական ակտիվներ

Հեղազոտության փուլ

Հետազոտությունից (կամ ներքին նախագծի հետազոտության փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվները չեն ճանաչվում: Հետազոտության (կամ ներքին նախագծի հետազոտության փուլի) ծախսումները ճանաչվում են որպես ծախս՝ դրանց տեղի ունենալու պահին:

Ներստեղծված գույքիլը չպետք է ճանաչվի որպես ակտիվ: Ներստեղծված մակնիշները, հրապարակումների անունները, հաճախորդների ցուցակները և ըստ էության նմանատիպ միավորները չպետք է ճանաչվեն որպես ոչ նյութական ակտիվներ:

Մշակման փուլ

Մշակումից (կամ ծրագրի մշակման փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ Խումբը կարող է ցուցադրել ստորև բերվածն ամբողջությամբ՝

- ա) ոչ նյութական ակտիվը այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար,
- բ) ոչ նյութական ակտիվը ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու իր մտադրությունը,
- գ) ոչ նյութական ակտիվը օգտագործելու կամ վաճառելու իր կարողությունը,
- դ) այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվն առաջացնելու հնարավոր ապագա տնտեսական օգուտներ: Ի թիվս այլոց, Խումբը պետք է ցուցադրի ոչ նյութական ակտիվի միջոցով ստեղծվող արդյունքի կամ հենց այդ ոչ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

նյութական ակտիվի համար շուկայի առկայությունը, կամ, եթե ակտիվը օգտագործվելու է հստակ ներսում, ապա ոչ նյութական ակտիվի օգտակարությունը,

ե) մշակման ավարտին հասցնելու և ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական, ֆինանսական և այլ միջոցների առկայությունը,

զ) ոչ նյութական ակտիվին մշակման ընթացքում վերագրելի ծախսումները արժանահավատորեն չափելու իր կարողությունը:

Չափումը ճանաչման պահին

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

ա) դրա գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը՝ առևտրային զեղչերը և արտոնությունները հանելուց հետո:

բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագա չափում

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար՝ հետևյալ օգտակար ծառայությունից ելնելով:

- Համակարգչային ծրագիր 5 տարի
- Լիցենզիաներ Լիցենզիայի գործողության ժամկետ

Ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը գնահատվում է զրո, իսկ ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդն է գծային մեթոդը:

4.6. Ակտիվների արժեզրկում

Սույն պարագրաֆի դրույթները վերաբերում են հիմնական միջոցներին, ոչ նյութական ակտիվներին:

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Խումբը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Խումբը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Արժեզրկումից կորստի ճանաչում

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորստի ճանաչումից հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

Արժեզրկումից կորստի հակադարձում

Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ակտիվի, բացառությամբ գույքի, գծով արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչելուց հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

4.7. Պաշարներ**Սկզբնական չափում**

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են Խմբին ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային գեղջերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները: Այն ներառում է նաև պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են նյութերը պատրաստի արտադրանք դարձնելու (վերամշակելու) ընթացքում:

Հաստատուն արտադրական վերադիր ծախսումները վերամշակման ծախսումների վրա բաշխվում են՝ ելնելով արտադրական հզորությունների նորմալ մակարդակից: Յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվող հաստատուն արտադրական վերադիր ծախսումների գումարը չի ավելանում ցածր արտադրողականության կամ արտադրության պարապորդի հետևանքով: Չբաշխված վերադիր ծախսումները ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում: Արտադրության ծավալների անսովոր բարձր լինելու ժամանակաշրջաններում յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվող հաստատուն արտադրական վերադիր ծախսումների գումարը նվազեցվում է այնպես, որ պաշարները չչափվեն ինքնարժեքից բարձր:

Փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվում են արտադրական հզորությունների փաստացի օգտագործման հիման վրա:

Պաշարների ինքնարժեքի մեջ այլ ծախսումները ներառվում են միայն այն չափով, որ չափով դրանք կատարվել են՝ պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Պաշարների ինքնարժեքի մեջ չներառվող և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումների օրինակներ են՝

- ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերաճի հետ.
- բ) պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը.
- գ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ.

դ) վաճառքի ծախսումները:

Երբ պաշարները ձեռք են բերվում հետաձգված մարման ժամկետով, ապա վճարման նորմալ պայմաններում ձեռքբերման գնի և վճարված գումարի տարբերությունը, ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսավորման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:

Պաշարների ինքնարժեքում փոխառության ծախսումների՝ կապիտալացման մոտեցումները ներկայացված են համապատասխան բաժնում:

Ինքնարժեքի բանաձևեր

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջին մուտք՝ առաջին ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:

Հերազա չափում

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման զուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների հաշվեկշռի ամսաթվի դրույթայմբ:

Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար՝ մինչև իրացման զուտ արժեք, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը: Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման զուտ արժեքի աճից, ճանաչվում են որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով: Ոչ իրացվելի են այն պաշարները, որոնք չեն իրացվել կամ օգտագործվել հաշվեկշռում հաշվառելից 12 ամսվա ընթացքում և որոնք հավանական է, որ որևէ այլ ձևով չեն օգտագործվի՝ կապված դրանց բարոյական հնացման, որակի վատացման և այլ պատճառներով:

4.8. Ֆինանսական ակտիվներ**Սկզբնական ճանաչում և չափում**

Ֆինանսական ակտիվը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով: Այլ բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները:

Դասակարգում և հերազա չափում. Չափման կարեգորիաներ

Խումբը դասակարգում է ֆինանսական ակտիվները՝ օգտագործելով հետևյալ չափման կատեգորիաները.

- ա) ամորտիզացված արժեքով չափվող,
- բ) իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- գ) իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- ա) ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար ֆինանսական ակտիվներ պահելը, և
- բ) ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- ա) ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքման միջոցով, թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- բ) ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, բացառությամբ երբ այն չափվում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

Ամորտիզացված արժեքի չափման համար կիրառվում է արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումն ու հետագա չափումը կախված է (i) ակտիվների պորտֆելի կառավարման համար Խմբի բիզնես մոդելից, և (ii) ակտիվի դրամական հոսքերի բնութագրերից:

Դասակարգում և հերազա չափում. Բիզնես մոդել

Բիզնես մոդելը այն եղանակն է, որն օգտագործելով Խումբը կառավարում է ակտիվները՝ դրամական հոսքեր ստանալու համար. արդյոք Խմբի նպատակն է. (i) ակտիվներից միայն պայմանագրային դրամական հոսքերի ստացումը («ակտիվների պահումը պայմանագրային դրամական հոսքերի ստացման համար») կամ (ii)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

պայմանագրային դրամական հոսքերի և ակտիվների վաճառքից առաջացող դրամական հոսքերի ստացումը («ակտիվների պահումը պայմանագրային դրամական հոսքերի և վաճառքի համար»), կամ, եթե կիրառելի չէ ոչ (i) կետը և ոչ էլ (ii) կետը, ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «այլ» բիզնես մոդելների մաս և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Դասակարգում և հետագա չափում. դրամական հոսքերի հարկանիշներ.

Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրային դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրային դրամական հոսքերի ստացման և վաճառքի համար, Խումբը գնահատում է, թե արդյոք դրամական հոսքերը ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարումները:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ ամբողջությամբ փոփոխվում է այդ պորտֆելի կառավարման բիզնես մոդելը: Վերադասակարգումը իրականացվում է առաջընթաց՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից:

Արժեզրկում-ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ

Ելնելով կանխատեսումներից, Խումբը հաշվարկում է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները: Խումբը չափում է ակնկալվող պարտքային կորուստները և ճանաչում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների համար պարտքային կորուստների գնահատված պահուստը:

Ակնկալվող կորուստների պահուստի չափումն արտացոլում է՝

- ա) անկողմնակալ և հավանականությամբ կշռված գումար, որը որոշվում է՝ գնահատելով հնարավոր արդյունքների տիրույթը,
- բ) փողի ժամանակային արժեքը, և
- գ) անցյալ դեպքերի, ընթացիկ պայմանների և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումների վերաբերյալ ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը հասանելի է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի:

Շահույթում կամ վնասում, որպես արժեզրկումից օգուտ կամ կորուստ, ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստների (կամ դրանց հակադարձումների) այն գումարը, որն անհրաժեշտ է, որպեսզի հաշվետու ամսաթվի դրությամբ կորստի պահուստը ճշգրտվի մինչև այն գումարը, որը պահանջվում է ճանաչել:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստը:

Խումբը դիտարկում է ֆինանսական ակտիվի պարտազանցումը 12-ամսյա ժամկետում, պարտազանցումը ամբողջ ժամկետում, և արժեզրկումը: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների համար գնահատվում է ֆինանսական գործիքի գծով պարտազանցման տեղի ունենալու ռիսկը դրա ակնկալվող ժամկետի ընթացքում: 12-ամսյա ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մաս են և արտացոլում են ամբողջ ժամկետում դրամական պակասությունները, որոնք կառաջանան, եթե պարտազանցում տեղի ունենա հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը 12 ամսից պակաս է):

Խումբը մշտապես կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով առևտրական դեբիտորական պարտքերի, պայմանագրի գծով ակտիվների և վարձակալության գծով դեբիտորական պարտքերի համար:

Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները՝

- ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- բ) պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը (դեֆոլտը) կամ ժամկետանց դառնալը,
- գ) փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ պայմանագրային պատճառներով փոխառուի պարտատիրոջ (պարտատերերի) կողմից զիջումների տրամադրումը, որոնք այլապես չէին տրամադրվի պարտատիրոջ (պարտատերերի) կողմից,
- դ) հավանական է դառնում, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի,
- ե) ֆինանսական դժվարությունների պատճառով տվյալ ֆինանսական ակտիվի համար ակտիվ շուկայի վերացումը,

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

զ) ֆինանսական ակտիվի գնումը կամ սկզբնավորումը մեծ զեղչով, որն արտացոլում է կրած պարտքային կորուստները:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ հումքը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Խումբը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Ապաճանաչում

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Խումբը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարզևատրումները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատուցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Առևտրական դեբիտորական պարտքերը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ են:

Դեբիտորական պարտքերը չափվում են գործարքի գնով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքի, երբ դեբիտորական պարտքը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ: Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Տրված փոխառություններ

Տրված փոխառությունները ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ են:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով տրված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (վնասը) ճանաչվում է

- սեփական կապիտալում, եթե ֆինանսական ակտիվը մասնակիցների ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական ակտիվը այլ կողմերի գծով է:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են և ցպահանջ ավանդները: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Խմբի դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:

4.9. Բաժնային գործիքներ

Որպես պարտավորություն կամ սեփական կապիտալ դասակարգումը Խմբի կողմից թողարկված պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են կա՛մ որպես ֆինանսական պարտավորություններ, կա՛մ էլ որպես սեփական կապիտալ՝ պայմանագրային համաձայնության բովանդակությանը և ֆինանսական պարտավորության ու բաժնային գործիքի սահմանումներին համապատասխան:

Խմբի կողմից թողարկված բաժնային գործիքները ճանաչվում են ստացված մուտքերի հիման վրա՝ հանած թողարկմանը ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Խմբի սեփական բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ որպես վերջինիս նվազեցում: Խմբի սեփական բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ մարման գծով շահույթում կամ վնասում որևէ օգուտ կամ կորուստ չի ճանաչվում:

4.10. Ֆինանսական պարտավորություններ

Ճանաչում

Խումբը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ապաճանաչում

Խումբը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Դասակարգում և չափում

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող, և իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Առևտրական կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ են:

Առևտրական կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչման պահին առևտրական կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքի, երբ կրեդիտորական պարտքը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Ստացված վարկեր և փոխառություններ

Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (օգուտը) ճանաչվում է

- որպես սեփական կապիտալի այլ տարր, եթե ֆինանսական պարտավորությունը բաժնետերերի ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական պարտավորությունը այլ կողմերի գծով է:

Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են զուտ գումարով այն դեպքում, երբ Խումբը՝

- ա) տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և
- բ) մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

4.11. Վարձակալություն.որպես վարձակալ

Ճանաչում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Վարձակալության մեկնարկի ամսաթիվը՝ որի դրությամբ վարձատուն հիմքում ընկած ակտիվը դարձնում է մատչելի վարձակալի օգտագործման համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի սկզբնական չափում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին հումքը չափում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

- ա) վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը,
- բ) վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,
- գ) վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, և
- դ) այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվն ապամոնտաժելիս կամ քանդելիս, ինչպես նաև այդ ակտիվի զբաղեցրած տեղանքը վերականգնելիս կամ հիմքում ընկած ակտիվը վերականգնելիս՝ բերելով այն վիճակի, որը պահանջվում է վարձակալության պայմանագրի ժամկետներով և պայմաններով, բացառությամբ այն ծախսումների, որոնք կատարվում են պաշարների արտադրության համար:

Վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին հումքը չափում է վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին:

Վարձավճարները պարունակում են վարձակալության ժամկետի ընթացքում հիմքում ընկած ակտիվի օգտագործման իրավունքի գծով հետևյալ վճարումները, որոնք դեռևս չեն վճարվում մեկնարկի ամսաթվին՝

- ա) հաստատուն վճարումներ՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսում,
 - բ) վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը, օրինակ՝ վճարումներ՝ կապված սպառողական գների ինդեքսից, վճարումներ՝ կապված ուղենշային տոկոսադրույքից (ինչպես օրինակ՝ LIBOR-ը), կամ վճարումներ, որոնք տատանվում են՝ կապված վարձակալության շուկայական դրույքների փոփոխությունների հետ:
 - գ) գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո,
 - դ) գնման օպցիոնի իրագործման գին, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և
 - ե) վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:
- Վարձավճարները պետք է գեղջվեն՝ կիրառելով վարձակալի վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, վարձակալը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հեփազա չափում

Մեկնարկի ամսաթվից հետո հումքը չափում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը՝ կիրառելով սկզբնական արժեքի մոդելը, բացառությամբ՝ եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը վերաբերում է հիմնական միջոցների դասին, որի նկատմամբ հումքը կիրառում է վերագնահատման մոդելը: Այս դեպքում հումքը կիրառում է վերագնահատման մոդելը բոլոր այն օգտագործման իրավունքի ձևով ակտիվների նկատմամբ, որոնք վերաբերում են հիմնական միջոցի տվյալ դասին:

Սկզբնական արժեքի մոդել կիրառելիս վարձակալը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով՝

- ա) հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և
- բ) ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկելիս հումքը կիրառում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման քաղաքականությունը:

Վարձակալության գծով պարտավորության հեփազա չափում

Մեկնարկի ամսաթվից հետո հումքը վարձակալության գծով պարտավորությունը չափում է՝

- ա) ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար,
- բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար, և

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում, կամ վերանայված հաստատուն վարձավճարները արտացոլելու համար:

Վարձակալության ժամկետի ընթացքում վարձակալության գծով պարտավորության տոկոսն ըստ ժամանակաշրջանների այն գումարն է, որը ներկայացնում է հաստատուն պարբերական տոկոսադրույք վարձակալության գծով պարտավորության մնացորդի նկատմամբ:

Ներկայացում

Խումբը ներկայացնում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները՝ այլ ակտիվներից առանձին և վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններից առանձին:

Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալություն

Խումբը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների նկատմամբ կիրառում է հաշվառման պարզեցված մոտեցումներ և չի ճանաչում օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ:

Խումբը կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս (ծախսում) գծային հիմունքով:

4.12. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցել է ծառայություն, Խումբը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Խումբը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Խումբը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Խումբը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը ակնկալվում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

4.13. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Ճանաչում

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Խումբն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Չափում

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ջեդջման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Ջեդջման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

4.14. Հասույթ գնորդների հետ պայմանագրերիցՃանաչում

Խումբը հաշվառում է գնորդի հետ պայմանագիրը միայն այն դեպքում, եթե բավարարվում են ստորև նկարագրված բոլոր չափանիշները.

- ա) պայմանագրի կողմերը հաստատել են պայմանագիրը և պարտավորվում են կատարել իրենց պայմանագրային պարտականությունները.
- բ) կարող է որոշակիացվել փոխանցվող ապրանքներին կամ ծառայություններին վերաբերող յուրաքանչյուր կողմի իրավունքները.
- գ) կարող է որոշակիացվել փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների վճարման պայմանները.
- դ) պայմանագիրն ունի առևտրային բնույթ. և
- ե) հավանական է, որ կստանա գնորդին փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների դիմաց հատուցումը:

Կատարման պարտականության որոշակիացում

Պայմանագրի մեկնարկին Խումբը գնահատում է գնորդի հետ պայմանագրով խոստացված ապրանքները կամ ծառայությունները և որպես կատարման պարտականություն որոշակիացնում է յուրաքանչյուր խոստում գնորդին փոխանցելու՝

- ա) ապրանք կամ ծառայություն (կամ ապրանքների կամ ծառայությունների խումբ), որը տարբերակելի է. կամ
- բ) տարբերակելի ապրանքների կամ ծառայությունների շարք, որն ըստ էության նույնն է և գնորդին փոխանցվում է նույն սխեմայով (եղանակով):

Կատարման պարտականություններ չեն Խմբի այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեն պայմանագիրը կատարելու համար, բայց չեն հանդիսանում գնորդին ապրանքների և ծառայությունների փոխանցման խոստում:

Կատարման պարտականությունների կատարում

Խումբը ճանաչում է հասույթ, երբ (կամ այնքանով, որքանով) կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ (կամ այնքանով, որքանով) գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում վերահսկողություն:

Կատարման պարտականություններ՝ ժամանակի ընթացքում կատարվող

Խումբը ժամանակի ընթացքում է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ վերահսկողությունը և, հետևաբար, կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը և ճանաչում հասույթ ժամանակի ընթացքում, եթե բավարարվում է ստորև բերված չափանիշներից որևէ մեկը՝

- ա) գնորդը միաժամանակ ստանում և սպառում է Խմբի կողմից կատարված (բավարարված) կատարման պարտականության արդյունքում ստացված օգուտները՝ կատարման պարտականության կատարմանը (կատարողականին) զուգընթաց.
- բ) կատարման պարտականության կատարման արդյունքում ստեղծվում կամ բարելավվում է ակտիվ (օրինակ՝ անավարտ արտադրանքը), որը վերահսկվում է գնորդի կողմից՝ ակտիվի ստեղծմանը կամ բարելավմանը զուգընթաց. կամ
- գ) կատարման պարտականության կատարումը չի ստեղծում Խմբի համար այլընտրանքային կիրառում ունեցող ակտիվ, և Խումբը ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք վճարումներ ստանալու՝ մինչև այդ ամսաթիվը կատարման պարտականության կատարման դիմաց:

Կատարման պարտականություններ՝ ժամանակի որոշակի պահին կատարվող

Եթե կատարման պարտականությունը չի կատարվում ժամանակի ընթացքում, Խումբը կատարում (բավարարում) է այդ կատարման պարտականությունը ժամանակի որոշակի պահին:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Որոշելու համար ժամանակի այն պահը, երբ գնորդը ձեռք է բերում խոստացված ակտիվի նկատմամբ վերահսկողություն, իսկ Խումբը կատարում (բավարարում) է կատարման իր պարտականությունը, դիտարկվում է վերահսկողության նկատմամբ կիրառվող պահանջները: Ի լրումն, դիտարկվում է նաև հետևյալը՝

- ա) Խումբը ունի այդ ակտիվի դիմաց վճարումներ ստանալու ներկա իրավունք.
- բ) գնորդն ակտիվի նկատմամբ ունի սեփականության իրավունք.
- գ) Խումբը փոխանցել է ակտիվի նկատմամբ ֆիզիկական տիրապետման իրավունք.
- դ) գնորդն ունի ակտիվի սեփականության հետ կապված նշանակալի ռիսկեր և հատույցներ.
- ե) գնորդն ակցեպտավորել (ընդունել) է ակտիվը:

Ակտիվի նկատմամբ վերահսկողություն

Ակտիվի նկատմամբ վերահսկողությունը նշանակում է ունենալ ակտիվի օգտագործումը ուղղորդելու և նրանից բոլոր մնացած նշանակալի օգուտները ստանալու կարողություն:

Վերահսկողությունը ներառում է Խմբի կարողությունը կանխել (արգելել) այլ կազմակերպություններին՝ ուղղորդել ակտիվի օգտագործումը և նրանից ստանալ օգուտներ: Ակտիվից ստացվող օգուտները պոտենցիալ դրամական հոսքերն են (ներհոսքերը կամ արտահոսքերի խնայողությունները), որոնք կարող են ստացվել ուղղակիորեն կամ անուղղակիորեն:

Գործարքի գին

Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը Խումբը ակնկալում է ստանալ, որպես փոխանակում, գնորդին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անունից հավաքագրված գումարները (օրինակ՝ ԱԱՀ, ակցիզային հարկ):

Հատուցումը, որը խոստացվել է գնորդի հետ կնքած պայմանագրով, կարող է ներառել հաստատուն (ֆիքսված) գումարներ, փոփոխուն գումարներ կամ երկուսը միասին:

Գործարքի գինը վերագրվում է պայմանագրում որոշակիացված յուրաքանչյուր կատարման պարտականությանը՝ կիրառելով առանձին վաճառքի գնի հարաբերակցության հիմունքը: Առանձին վաճառքի գնի լավագույն վկայությունը ապրանքի կամ ծառայության դիտելի գինն է, երբ Խումբը այդ ապրանքը կամ ծառայությունը առանձին-առանձին վաճառում է համանման հանգամանքներում և համանման գնորդներին:

Եթե առանձին վաճառքի գինը ուղղակիորեն դիտելի չէ, ապա կիրառվում են վաճառքի գնի գնահատման հետևյալ մեթոդները՝

- ա) ճշգրտված շուկայական գնահատման մոտեցում,
- բ) ակնկալվող ծախսումներ գումարած մարժա մոտեցում, և
- գ) մնացորդային մոտեցում:

Բացառությամբ այն դեպքերի, երբ կա դիտելի վկայություն, որ ամբողջ զեղչը վերաբերում է մեկ կամ մի քանի, բայց պայմանագրով ամրագրված ոչ բոլոր կատարման պարտականություններին, զեղչը համամասնորեն վերագրվում է պայմանագրով ամրագրված բոլոր կատարման ենթակա պարտականություններին: Այդպիսի հանգամանքներում զեղչի համամասնական վերագրումը հանդիսանում է գործարքի գինը յուրաքանչյուր կատարման պարտականությանը վերագրման հետևանք՝ հիմքում ընկած տարբերակելի ապրանքների կամ ծառայությունների առանձին վաճառքի գնի հարաբերակցության հիման վրա:

Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ

Գործարքի գինը որոշելիս՝ Խումբը ճշգրտում է հատուցման խոստացված գումարը՝ հաշվի առնելու համար ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը, եթե պայմանագրի կողմերի միջև համաձայնեցված վճարման ժամանակացույցը (բացահայտ կամ ենթադրյալ) կողմերին տրամադրում է նշանակալի օգուտ՝ գնորդին ապրանքներ կամ ծառայություններ փոխանցելու ֆինանսավորումից: Այդպիսի հանգամանքներում, պայմանագիրը պարունակում է ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ: Ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ կարող է առկա լինել անկախ նրանից ֆինանսավորման խոստումը բացահայտորեն ամրագրված է պայմանագրում, թե ենթադրվում է պայմանագրի կողմերի միջև համաձայնեցված վճարման պայմաններով:

Խոստացված հատուցման գումարը ֆինանսավորման նշանակալի բաղադրիչի գծով ճշգրտելու նպատակը Խումբը հասույթը ճանաչում է այն գումարով, որը գնորդը կվճարեր խոստացված ապրանքների կամ ծառայությունների դիմաց, եթե գնորդը այդ ապրանքների կամ ծառայությունների դիմաց վճարեր «կանխիկ», երբ (կամ այնքանով, որքանով) դրանք փոխանցվում են գնորդին (այսինքն՝ վաճառքի «կանխիկ» գինը):

Տոկոսները հաշվարկվում են արդյունքային տոկոսադրույքի մեթոդով:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Գնորդին վճարման ենթակա հատուցում

Գնորդին վճարման ենթակա հատուցումը ներառում է դրամական միջոցների գումարներ, որոնք Խումբը վճարում է կամ ակնկալում է վճարել: Գնորդին վճարման ենթակա հատուցումը ներառում է նաև կրեդիտ կամ այլ հոդվածներ (օրինակ, կուպոններ կամ վաուչերներ), որոնք կարող են օգտագործվել (հաշվանցվել) Խմբին (կամ այլ կողմերին, որոնք գնորդից գնում են Խմբի ապրանքները կամ ծառայությունները) վճարվելիք գումարների դիմաց: Խումբը գնորդին վճարման ենթակա հատուցումը հաշվառում է որպես գործարքի գնի նվազեցում և, հետևաբար, հասույթի նվազեցում:

Ոչ դրամական հատուցում

Այն պայմանագրերի համար գործարքի գինը որոշելիս, որոնց համաձայն Խումբը խոստանում է հատուցում ոչ դրամական հատուցման ձևով, ոչ դրամական հատուցումը չափվում է իրական արժեքով:

Հասույթի ճանաչում և չափում

Հասույթը ճանաչվում է, երբ (կամ այնքանով, որքանով) Խումբը կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ (կամ այնքանով, որքանով) գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում վերահսկողություն:

Երբ (կամ այնքանով, որքանով) կատարման պարտականությունը կատարվում է, Խումբը ճանաչում է որպես հասույթ՝ գործարքի գնի այն մասը, որը վերագրվում է տվյալ կատարման պարտականությանը:

Երբ կատարման պարտականության կատարման արդյունքը խելամտորեն չափելի չէ, ապա հասույթը ճանաչվում է կատարված ծախսումների չափով:

Կատարման պարտականության ամբողջությամբ կատարման առաջընթացի (աստիճանի) չափում

Ժամանակի ընթացքում կատարվող յուրաքանչյուր կատարման պարտականության համար Խումբը ճանաչում է ժամանակի ընթացքում հասույթը՝ չափելով այդ կատարման պարտականության ամբողջությամբ կատարման առաջընթացը (աստիճանը):

Կատարման առաջընթացի (աստիճանի) չափման նպատակն է ներկայացնել խոստացված ապրանքների կամ ծառայությունների վերահսկողությունը գնորդին փոխանցելու կատարողականը (այսինքն՝ կազմակերպության կողմից կատարման պարտականության կատարումը):

Կատարման առաջընթացի (աստիճանի) չափման համար կիրառվում են արդյունքների (ելքային) մեթոդները և ռեսուրսների (մուտքային) մեթոդները: Արդյունքների մեթոդները, ինչպիսիք են՝ մինչև տվյալ ամսաթիվը ավարտված կատարման ավարտականության ուսումնասիրությունը, ստացված արդյունքների գնահատումները, փուլերի ավարտվածությունը, անցած ժամանակահատվածը, արտադրված կամ առաքված միավորները: Ռեսուրսների մեթոդները, ինչպիսիք են՝ սպառված ռեսուրսները, ծախսված աշխատաժամերը, կրած ծախսումները, անցած ժամանակահատվածը, օգտագործված մեքենա ժամերը:

Պայմանագրի ծախսումներ

Ծախսումները, որոնք վերաբերում են ուղղակիորեն պայմանագրին (կամ ակնկալվող կոնկրետ պայմանագրին) ներառում են՝

- ա) աշխատուժի գծով ուղղակի ծախսումներ (օրինակ՝ այն աշխատակիցների աշխատավարձը, որոնք խոստացված ծառայությունները ուղղակիորեն մատուցում են գնորդին)։
- բ) նյութերի գծով ուղղակի ծախսումներ (օրինակ՝ նյութերը, որոնք օգտագործվում են գնորդին խոստացված ծառայությունները մատուցելիս)։
- գ) բաշխված ծախսումները, որոնք վերաբերում են ուղղակիորեն պայմանագրին կամ պայմանագրից բխող գործունեություններին (օրինակ՝ պայմանագրի կառավարման և վերահսկման ծախսումները, պայմանագրի կատարման ընթացքում օգտագործվող գործիքների, սարքավորումների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ապահովագրությունը և ամորտիզացիան)։
- դ) ծախսումները, որոնք պայմանագրի շրջանակներում գնորդի կողմից միանշանակ ենթակա են հատուցման և
- ե) այլ ծախսումները, որոնք Խումբը կրում է բացառապես պայմանագիրը կնքելու արդյունքում (օրինակ՝ հատուցումներ ենթակապալառուներին):

Խումբը հետևյալ ծախսումները ճանաչում է որպես ծախս, երբ դրանք կատարվում են՝

- ա) ընդհանուր և վարչական ծախսումներ (բացառությամբ, եթե այդ ծախսումները պայմանագրի համաձայն գնորդի կողմից միանշանակ ենթակա են հատուցման)։

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- բ) պայմանագրի իրականացման նպատակով վատնված նյութերի, աշխատուժի կամ այլ ռեսուրսների գծով ծախսումներ, որոնք ներառված չեն պայմանագրի գնի մեջ:
- գ) ծախսումներ, որոնք վերաբերում են պայմանագրի արդեն իսկ կատարված (կամ մասնակի կատարված) կատարման պարտականություններին (այսինքն՝ ծախսումներ, որոնք վերաբերում են անցյալում կատարված գործունեությանը): և
- դ) ծախսումներ, որոնց դեպքում հումքը չի կարող տարբերակել՝ ծախսումները վերաբերում են չկատարված կատարման պարտականություններին, թե կատարված կատարման պարտականություններին (կամ մասամբ կատարված կատարման պարտականություններին):

Ներկայացում

Երբ պայմանագրի որևէ կողմ կատարում է պայմանագրային պարտականություններ, հումքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պայմանագիրը ներկայացնում է որպես պայմանագրի գծով ակտիվ կամ պայմանագրի գծով պարտավորություն, կախված է մեր կողմից պարտականության կատարման և գնորդի կողմից վճարումների կատարման հարաբերակցությունից: Խումբը հատուցման նկատմամբ իր անվերապահ իրավունքը առանձին ներկայացնում է որպես դեբիտորական պարտք:

4.15. Ծնորհներ**Ճանաչում**

Ծնորհները ճանաչվում են, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ Խումբը բավարարելու է դրանց կցված պայմանները և շնորհները ստացվելու են:

Ներկայացում

Ծնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են՝ որպես հետաձգված եկամուտ:

Հաշվառում

Ծնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Խումբը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:

Ծնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է համարել տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա (դեբիտորական պարտք):

4.16. Փոխառության ծախսումներ**Ճանաչում**

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման կամ արտադրության հետ, կապիտալացվում են որպես տվյալ ակտիվին վերագրվող ծախսումների (ինքնարժեքի) մի մաս: Մնացած այլ դեպքերում փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են:

Կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներ

Այնքանով, որքանով Խումբը միջոցները բացառապես փոխ է առնում որակավորվող ակտիվ ձեռք բերելու նպատակով, փոխառության ծախսումների գումարը, որը ենթակա է այդ ակտիվի վրա կապիտալացման, Խումբը որոշում է որպես փոխառության փաստացի ծախսումներ, որոնք առաջանում են այդ փոխառությունից տվյալ ժամանակաշրջանում՝ հանած այդ փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումից ստացվող ցանկացած եկամուտ:

Այնքանով, որքանով Խումբը միջոցները փոխ է առնում ընդհանուր նպատակներով և օգտագործում է որակավորվող ակտիվի ձեռքբերման (կառուցման, արտադրության) նպատակով, Խումբը կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշում է՝ այդ ակտիվի գծով ծախսերի նկատմամբ կիրառելով կապիտալացման դրույքը: Կապիտալացման դրույքը տվյալ ժամանակաշրջանի ընթացքում համարված փոխառություններին վերաբերող փոխառության ծախսումների միջին կշռված մեծությունն է, բացառությամբ այն փոխառությունների, որոնք բացառապես կատարվել են որակավորվող ակտիվի ձեռքբերման (կառուցման, արտադրության) նպատակով: Մի ժամանակաշրջանում կապիտալացված փոխառության ծախսումների գումարը չպետք է գերազանցի այդ ժամանակաշրջանում կատարված փոխառության ծախսումներին:

Կապիտալացման մեկնարկ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Խումբը սկսում է փոխառության ծախսումների կապիտալացումը՝ որպես որակավորվող ակտիվի արժեքի մաս, մեկ-նարկի ամսաթվին: Կապիտալացման համար մեկնարկի ամսաթիվը այն ամսաթիվն է, երբ Խումբը առաջին անգամ բավարարում է հետևյալ բոլոր պայմանները՝

ա) ակտիվի համար կատարում է ծախքեր.

բ) կատարում է փոխառության ծախսումներ. և

գ) ձեռնարկում է այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են՝ ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար:

Կապիտալացման դադարեցում

Խումբը դադարեցնում է փոխառության ծախսումների կապիտալացումը, երբ որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար անհրաժեշտ աշխատանքներն ըստ էության կատարված են:

Երբ Խումբը որակավորվող ակտիվի կառուցումն ավարտում է մաս-մաս, և յուրաքանչյուր մաս պատրաստ է օգտագործման, երբ այլ մասերում կառուցումը դեռևս շարունակվում է, փոխառության ծախսումների կապիտալացումը այդ մասի համար դադարեցնում է, երբ այդ մասն իր նախատեսված օգտագործման կամ վաճառքի նպատակով պատրաստելու համար անհրաժեշտ բոլոր աշխատանքներն ըստ էության ավարտված են:

4.17. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ**Ֆունկցիոնալ արժույթ**

Ֆունկցիոնալ արժույթը որոշելիս Խումբը հաշվի է առնում ստորև նշված գործոնները՝

ա) արժույթը՝

-որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են). և

-այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են):

Խմբի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Սկզբնական ճանաչում

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

4.18. Շահութահարկ**Ընթացիկ հարկ**

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառվեն մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Խումբը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Խումբը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Եկամուտ կամ ծախս ներկայացում

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հողվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Խումբը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հողվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Հաշվանցում

Խումբը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՛

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Խումբը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՛

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

I. նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

II. տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

4.19. Իրական արժեքի չափում

Սովորաբար իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին գործարքի գինն է: Երբ ակտիվը ձեռք է բերվում կամ պարտավորությունը ստանձնվում է այդ ակտիվի կամ պարտավորության փոխանակման գործարքում, գործարքի գինն այն գինն է, որը վճարվել է ակտիվը ձեռք բերելու համար կամ ստացվել է պարտավորությունը ստանձնելու

համար (մուտքի գին): Հակառակ դրան, ակտիվի կամ պարտավորության իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվի պարտավորությունը փոխանցելու համար (ելքի գին):

Գնահատման մեթոդներ

Խումբը օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան (տեղին) դիտելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտելի ելակետային տվյալների օգտագործումը:

Օգտագործվող գնահատման մեթոդներն են՝ շուկայական մոտեցումը, ծախսային մոտեցումը և եկամտային մոտեցումը:

Իրական արժեքի հիերարխիա

Իրական արժեքի հիերարխիայում ամենաբարձր առաջնահերթությունը տրվում է նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված (չճշգրտվող) գներին (1-ին մակարդակի տվյալներ), իսկ ամենացածրը՝ ոչ դիտելի տվյալներին (3-րդ մակարդակի տվյալներ): 2-րդ մակարդակի ելակետային տվյալներն այն տվյալներն են, բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնորոշվող գներից, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի են ակտիվի կամ պարտավորության համար:

4.20. Սխալներ

Խումբը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվություններին փաթեթում՝

- ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ
- բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

4.21. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

- ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ
- բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

4.22. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Խումբը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

- ա) պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով, կամ
- բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Խմբի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Խումբը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին: Այնուամենայնիվ, ճշգրտումը կարող է վերագրվել սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչի (օրինակ՝ մեկ այլ ՖՀՄՍ-ի պահանջները բավարարելու նպատակով):

Երբ հսկի համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա հսումը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում հսումը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

4.23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Խումբը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Խումբը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Եթե շահաբաժինները առաջադրվում կամ հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո, Խումբը չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

5. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

Անընդհատության հիմունք. Ղեկավարությունը պատրաստել է սույն ֆինանսական հաշվետվությունները անընդհատության հիմունքի հիման վրա: Ղեկավարության այս դատողությունները հիմնված են հսկի ֆինանսական վիճակի, ընթացիկ պլանների, շահութաբերության և ֆինանսական ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև հսկի ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական վերջին փոփոխությունների ազդեցության վերլուծության հիման վրա:

Փոխկապակցված անձանց հետ գործարքների սկզբնական ճանաչում (ծանոթ. 34). Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը ունենում է գործարքներ իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9 պահանջում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչում՝ հիմնվելով իրենց իրական արժեքների վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատվում են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ առկա չէ ակտիվ շուկա նման գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նման տեսակի գործարքների գնահատումը և արդյունքային տոկոսադրույքի վերլուծությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում (ծանոթ. 10,13). Ակնկալվող պարտքային կորուստների չափումը կարևոր գնահատում է, որը իրականացվում է մեթոդաբանության, մոդելների և բազային տվյալների օգտագործմամբ: Հետևյալ բաղադրիչները զգալի ազդեցություն ունեն պարտքային կորուստների գնահատված պահուստի վրա՝ դեֆոլտի որոշումը, պարտքային ռիսկի էական աճը, դեֆոլտի հավանականությունը և դեֆոլտի դեպքում կորստի գումարը, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշները:

Հասույթի ճանաչում (ծանոթ. 25). Կառուցապատման շինարարական աշխատանքների գծով կատարման պարտականությունները կատարվում են և հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում, թե ժամանակի որոշակի պահին: Կառուցապատման, վերանորոգման շինարարական աշխատանքների գծով ժամանակի ընթացքում կատարվող յուրաքանչյուր կատարման պարտականության համար Խումբը ճանաչում է ժամանակի ընթացքում հասույթը՝ չափելով այդ կատարման պարտականության ամբողջությամբ կատարման առաջընթացը (աստիճանը): Կատարման առաջընթացի (աստիճանի) չափման համար կիրառվում է արդյունքների (ելքային) մեթոդները, ինչպիսիք են մինչև տվյալ ամսաթիվը ավարտված կատարման պարտականության ուսումնասիրությունը,

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ստացված արդյունքների գնահատումները, փուլերի ավարտվածությունը, անցած ժամանակահատվածը, արտադրված կամ առաքված միավորները կամ ռեսուրսների մեթոդները, ինչպիսիք են՝ սպառված ռեսուրսները, ծախսված աշխատաժամերը, կրած ծախսումները, անցած ժամանակահատվածը, օգտագործված մեքենա ժամերը:

Օգտակար ծառայություն (ծանոթ. 8). Շենքերի օգտակար ծառայությունը գնահատվել է՝ հաշվի առնելով ենթադրվող օգտագործելիությունը: Օգտակար ծառայության մեծ ժամկետը, ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական փոփոխությունները, շուկայի փոփոխությունները կարող են ազդեցություն թողնել գնահատումների վրա:

6. Նոր և փոփոխված ՖՀՄՍ-ներ

Ստորև ներկայացված նոր ստանդարտները և ստանդարտների փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ղեկավարության գնահատմամբ հետևյալ փոփոխություններն էական ազդեցություն չեն ունեցել իր ֆինանսական վիճակի կամ գործունեության արդյունքների վրա.

- COVID-19-ի հետ կապված վարձավճարների արտոնություններ (փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում),
- Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսումներ (փոփոխություններ ՀՀՄՍ 37-ում),
- ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ 2018–2020 թթ.,
- Հիմնական միջոցներ. նախատեսված օգտագործումից առաջ հասույթ (փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում):

7. Դեռևս չկիրառվող նոր և փոփոխված ՖՀՄՍ-ներ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ չէին գործում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն ունենան Խմբի ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները ուժի մեջ մտնելու օրվանից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

- փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. գործում է 2023թ. հունվարի 1-ից,
- փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. գործում է 2023թ. հունվարի 1-ից,
- փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. գործում է 2023թ. հունվարի 1-ից,
- ՖՀՄՍ 17. գործում է 2023թ. հունվարի 1-ից:

8. Հիմնական միջոցներ

'000 դրամ	Շենքեր	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Հողամասեր	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք									
31 դեկտեմբեր 2020թ.	575,261	14,272	2,502,916	1,372,316	79,141	58,983	345,318	-	4,948,207
Ձեռքբերում	-	-	173,814	56,499	2,474	-	17,827	3,203	253,817
Դուրսգրում	-	-	(10,795)	(3,002)	(1,184)	-	-	-	(14,981)
31 դեկտեմբեր 2021թ.	575,261	14,272	2,665,935	1,425,813	80,431	58,983	363,145	3,203	5,187,043
Ձեռքբերում	300	191	376,334	16,622	906	-	500	500	395,353
Դուրսգրում	-	-	(55,591)	-	(4,273)	(688)	-	-	(60,552)
31 դեկտեմբեր 2022թ.	575,561	14,463	2,986,678	1,442,435	77,064	58,295	363,645	3,703	5,521,844
Կուրսակված մաշվածություն									
31 դեկտեմբեր 2020թ.	33,437	3,194	1,203,815	962,859	65,882	49,860	-	-	2,319,047
Մաշվածություն	7,600	460	130,038	7,219	5,002	1,105	-	-	151,424
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-	(2,681)	(244)	(1,136)	-	-	-	(4,061)
31 դեկտեմբեր 2021թ.	41,037	3,654	1,331,172	969,834	69,748	50,965	-	-	2,466,410
Մաշվածություն	7,539	315	147,616	10,346	3,522	704	-	-	170,042
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-	(45,550)	-	(4,210)	(689)	-	-	(50,449)
31 դեկտեմբեր 2022թ.	48,576	3,969	1,433,238	980,180	69,060	50,980	-	-	2,586,003
Հաշվեկշռային արժեք									
31 դեկտեմբեր 2020թ.	541,824	11,078	1,299,101	409,457	13,259	9,123	345,318	-	2,629,160
31 դեկտեմբեր 2021թ.	534,224	10,618	1,334,763	455,979	10,683	8,018	363,145	3,203	2,720,633
31 դեկտեմբեր 2022թ.	526,985	10,494	1,553,440	462,255	8,004	7,315	363,645	3,703	2,935,841

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Մաշվածություն

‘000 դրամ

Ընդամենը, այդ թվում՝

- արտադրական նշանակության
- վարչական նշանակության

Ծանոթ.	2022	2021
	170,042	151,424
25	162,668	143,385
	7,374	8,039

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ եղել են:

Գրավադրում

Վարկային պայմանագրերի շրջանակներում գրավադրված է Ընկերության Վ.Վաղարշյան 20 հասցեում գտնվող վարչական շենքը՝ գնահատված 361,000 հազար դրամ գումարով, Արտաշիսյան փողոց 106/1 հասցեում գտնվող արտադրական նշանակության անշարժ գույքը՝ գնահատված 164,400 հազար դրամ գումարով, Արտաշիսյան փողոց 100/17 հասցեում գտնվող արտադրական նշանակության անշարժ գույքը՝ գնահատված 418,125 հազար դրամ գումարով, շարժական գույքից թվով 10 տեխնիկա՝ գնահատված 414,720 հազար դրամ գումարով, շարժական գույքից թվով 11 մեքենա-սարքավորումներ՝ գնահատված 765,000 հազար դրամ գումարով, վարկով ձեռքբերված արևային կայաններ՝ գնահատված 49,220 հազար դրամ գումարով (ծանոթ.17):

Հիմնական միջոցների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ չկան:

Վերագնահատում

01.01.2019թ. դրությամբ իրականացվել է հիմնական միջոցների վերագնահատում՝ անկախ գնահատողի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությունների հիման վրա: Վերագնահատման արդյունքում շենքերի, կառուցվածքների, հողամասերի և արտադրական-տնտեսական գույքի հաշվեկշռային արժեքները նվազել են, իսկ մեքենասարքավորումների հաշվեկշռային արժեքը ավելացել է:

Այլ

Դեռևս օգտագործման մեջ գտնվող, սակայն լրիվ մաշված հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը 31.12.2022թ-ին կազմում է 147,615 հազար դրամ (31.12.2021թ-ին՝ 123,851 հազար դրամ):

Հիմնական միջոցների ձեռք բերման պայմանագրային հանձնառություններ չկան:

Նշանակալի ձեռքբերումներ

Հաշվետու տարում նշանակալի ձեռքբերումներ եղել է ճակատային անիվավոր եղանակով ամբարձիչ (1 հատ MANITOU MT1033 38,709 հազար դրամ արժեքով):

9. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Խումբը, որպես վարձակալ, սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2020թ. հունվարի 1-ից՝ հետընթաց, որի համաձայն համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում՝ ճանաչված սկզբնական կիրառման ամսաթվին: Խումբը կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության նկատմամբ կիրառում է հաշվառման պարզեցված մոտեցումները:

Վարձակալվել է Պարույր Հակոբյանից տրանսպորտային միջոց՝ մինչև 31 դեկտեմբերի 2025թ. ժամկետով և 700 հազար դրամ ամսական (ներառյալ եկամտային հարկը) վճարման պայմանով:

Մնացորդ առ 01.01.2021թ.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ

Մաշվածություն, այդ թվում՝

- արտադրական նշանակության
- վարչական նշանակության

Մնացորդ առ 31.12.2022թ.

‘000 դրամ
25,291
-
(6,323)
-
(6,323)
18,968

10. Փոխառություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

‘000 դրամ

	Մնացորդ 31.12.2022թ	Մնացորդ 31.12.2021թ
Ընդամենը, այդ թվում՝	1,360,039	1,235,318
- երկարաժամկետ փոխառություններ, որից՝		
կապակցված կողմերի գծով	1,375,187	1,231,055
- արժեզրկման գծով պահուսպ	(41,255)	(36,935)
- կարճաժամկետ փոխառություններ, որից		
կապակցված կողմերի գծով	32,068	49,294
- արժեզրկման գծով պահուսպ	28,158	45,384
	(5,961)	(8,096)

‘000 դրամ

	Տոկոսա- դրույք	Մարման ժամկետ	Մնացորդ 31.12.2022թ
Երկարաժամկետ փոխառություններ	12	31/12/2025	1,333,932
Կարճաժամկետ փոխառություններ	-	31/12/2023	26,107

Փոխառությունները տրամադրվել են տոկոսով և անտոկոս, տարեվերջին ամբողջությամբ անտոկոս են եղել, գրավով ապահովված չեն: Փոխառությունները ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ են:

Սկզբնական ճանաչման պահին փոխառությունները չափվել են իրական արժեքով: Սկզբնական ճանաչման պահին տրված անտոկոս փոխառությունների գումարի զեղչումը (իրական արժեք) իրականացվել է 12% տարեկան տոկոսադրույքով: Ձեղչումից առաջացած զուտ արդյունքը ճանաչվել է սեփական կապիտալում, իսկ տոկոսային եկամուտը՝ շահույթում (վնասում) (ծանոթ. 27):

11. Պաշարներ

‘000 դրամ

	Մնացորդ 31.12.2022թ	Մնացորդ 31.12.2021թ
Ընդամենը, այդ թվում՝	431,134	433,028
- շինանյութ	285,526	284,771
- վառելանյութ	19,164	25,598
- պահեստամաս	61,715	63,289
- արտադրանք	30,867	28,558

2022թ. որպես ծախս ճանաչված պաշարների հաշվեկշռային արժեքը կազմել է 1,380,980 հազար դրամ (2021թ.-ին՝ 1,677,088 հազար դրամ):

12. Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար

‘000 դրամ

	Մնացորդ 31.12.2022թ.	Մնացորդ 31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	662,033	387,489
- նյութերի գծով, որից՝		
կապակցված կողմերի գծով	457,235	30,019
- աշխատանքների և ծառայությունների գծով, որից՝		
կապակցված կողմերի գծով	435,500	1,600
	204,798	357,470
	172,830	229,891

13. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

'000 դրամ	Մնացորդ	
	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	800,011	1,064,746
- կատարված շին. աշխատանքներից, որից՝	702,978	973,719
կապակցված կողմերի գծով	22,683	15,714
- պաշարների վաճառքից, որից՝	69,126	76,153
կապակցված կողմերի գծով	22,204	37,111
- վարձակալությունից, որից՝	31,243	22,683
կապակցված կողմերի գծով	30,869	22,351
- հիմնական միջոցների վաճառքից	500	18,245
կապակցված կողմերի գծով	-	4,160
- արժեզրկման գծով պահուսպ	(3,863)	(26,077)

14. Դրամական միջոցներ

Ընդամենը, այդ թվում՝	Մնացորդ 31.12.2022թ.			Մնացորդ 31.12.2021թ.		
	Եվրո	ԱՄՆ	'000	Եվրո	ԱՄՆ	'000
		դոլար	դրամ		դոլար	դրամ
	125,000	260,000	1,214,022	-	-	15,400
- դրամարկղում	-	-	10,998	-	-	2,787
- բանկում՝ արժույթով	-	-	1,048,188	-	-	12,613
- բանկում՝ արտարժույթով	125,000	260,000	154,836	-	-	-

31.12.2022թ. դրամական միջոցների մնացորդից 2023թ. վճարվել են 618 մլն դրամ վարկային պարտավորությունների համար, 410 մլն դրամ՝ մատակարարներին, 102 մլն դրամ՝ աշխատավարձ:

15. Այլ ընթացիկ ակտիվներ

'000 դրամ	Մնացորդ	
	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	18,174	9,437
- աշխատավարձի գծով կանխավճար	14,754	8,410
- հետաձգված հաշվանցման ենթակա ԱԱՀ	3,359	1,027

16. Սեփական կապիտալ

Սեփական կապիտալը (զուտ ակտիվները) ձևավորված է կանոնադրական կապիտալից (թողարկված և տեղաբաշխված (վճարված) կապիտալ), չբաշխված շահույթից (վնասից)՝ ներառյալ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) ֆինանսական արդյունքը և շահաբաժնի կանխավճարը, պահուստային կապիտալից (հիմնադրամից): Սեփական կապիտալում է ներառվում նաև բաժնետերերին ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպություններին տրված ու ստացված անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառությունների սկզբնական չափումից առաջացած զուտ արդյունքը (սեփական կապիտալի այլ տարրեր):

Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալը կազմվել է բաժնետերերի ձեռք բերած հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից: Յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

Խմբի կանոնադրական կապիտալը կազմում է 51,130,000 (հիսուսմեկ միլիոն հարյուր երեսուն հազար դրամ) ՀՀ դրամ, որը կազմում է 20,452 հատ սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2,500 դրամ: Կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են և վճարված: Հաշվետու տարում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

Գրավադրում

Բանկում գրավադրված է Խմբի արժեթղթեր՝ հասարակ անվանական բաժնետոմսեր 11,417 /տասանմեկ հազար չորս հարյուր տասնյոթ/ հատ (ծանոթ.17):

Զբաղված շահույթ

Խումբն իրավունք ունի տարեկան մեկ անգամ իրականացնել իր շահույթի բաշխում բաժնետերերի միջև: Շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից: Բաշխման ենթակա շահույթը բաշխվում է բաժնետերերի միջև՝ ըստ կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:

Պահուստային կապիտալ

Խմբում ստեղծվում է պահուստային կապիտալ՝ ոչ պակաս կանոնադրական կապիտալի 15 տոկոսից: Եթե պահուստային կապիտալը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ կապիտալին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Խմբի նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային կապիտալն օգտագործվում է Խմբի կորուստները ծածկելու, ինչպես նաև Խմբի պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Խմբի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

Խումբը, կանոնադրությամբ սահմանված կարգով, ստեղծել է պահուստային կապիտալ, որը կազմում է 60,580 հազար դրամ: Հաշվետու տարում պահուստային կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

17. Վարկեր

Ստացված վարկերը տոկոսակիր են, ապահովված են գրավով, չափվում են ամորտիզացված արժեքով:

Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերի վերաբերյալ ներկայացված է ծանոթ. 31-ում:

'000 դրամ	Տոկոսա դրույք	Մարման ժամկետ	Մնացորդ 31.12.2022թ.	Մնացորդ 31.12.2021թ.
Ընդամենը վարկեր, այդ թվում՝			621,373	484,931
<< դրամով վարկեր	11-13%	09/12/24-22/11/27	575,745	431,673
<< դրամով վարկեր	7,5%	09/09/30	32,896	35,902
<< դրամով վարկեր	13%	15/02/23	11,667	17,143
Հաշվ. տոկոսներ	-	-	827	78
Երաշխիքի գծով տոկոս	1%	25/01/23-09/01/24	238	135

Երաշխիք

Բանկերը շինարարական աշխատանքների իրականացման համար տրամադրել են երաշխիքներ տարեկան 1% տոկոսադրույքով: Տրամադրած երաշխիքային գումարի մնացորդը 31.12.2022թ. կազմել է 2,720,780 (1,879,129 հազար դրամ և 841,651 հազար դրամ) հազար դրամ:

Երաշխավորություն

«Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին շինարարական աշխատանքների կատարման համար Ընկերությունը տրամադրել է երաշխավորություն, որը 31.12.2022թ. դրությամբ կազմում է 240,181 հազար դրամ:

Պարույր Հակոբյանը անձնական երաշխավորություն է տվել 40,000 հազար դրամ գումարով արևային կայանների ձեռքբերման նպատակով ստացված վարկային պարտավորությունների կատարման համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ

Գրավադրում

Վարկային պայմանագրերի շրջանակներում գրավադրված է Ընկերության Վ.Վաղարշյան 20 հասցեում գտնվող վարչական շենքը՝ գնահատված 361,000 հազար դրամ գումարով, Արտաշիսյան փողոց 106/1 հասցեում գտնվող արտադրական նշանակության անշարժ գույքը՝ գնահատված 164,400 հազար դրամ գումարով, Արտաշիսյան փողոց 100/17 հասցեում գտնվող արտադրական նշանակության անշարժ գույքը՝ գնահատված 418,125 հազար դրամ գումարով, շարժական գույքից թվով 10 տեխնիկա՝ գնահատված 414,720 հազար դրամ գումարով, շարժական գույքից թվով 11 մեքենա-սարքավորումներ՝ գնահատված 765,000 հազար դրամ գումարով, վարկով ձեռքբերված արևային կայաններ՝ գնահատված 49,220 հազար դրամ գումարով, ինչպես նաև Պարույր Հակոբյանին պատկանող Ընկերության 55,8% հասարակ անվանական բաժնետոմսերը՝ գնահատված 28,542 հազար դրամ գումարով և Բազենք ՓԲԸ-ի 62% անվանական բաժնետոմսերը՝ գնահատված 2,571,264 հազար դրամ գումարով:

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցված վարկային պարտավորություններ չունի:

18. Փոխառություններ

'000 դրամ	Մնացորդ	
	31.12.2022թ	31.12.2021թ
Ընդամենը, այդ թվում՝	3,440	-
- կարճաժամկետ փոխառություններ, որից	3,440	-

'000 դրամ	Տոկոսա-դրույք	Մարման ժամկետ	31.12.2022թ	
			Անվանական արժեք	Հաշվեկշռային արժեք
Կարճաժամկետ փոխառություններ	-	31/12/2023	3,440	3,440

Փոխառությունները ստացվել են անտոկոս, գրավով ապահովված չեն:

19. Վարձակալության գծով պարտավորություններ

Երկարաժամկետ վարձակալություններ

Ընկերությունը, որպես վարձակալ, սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2020թ. հունվարի 1-ից՝ հետընթաց, որի համաձայն համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում՝ ճանաչված սկզբնական կիրառման ամսաթվին: Ընկերությունը կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության նկատմամբ կիրառում է հաշվառման պարզեցված մոտեցումները:

Վարձակալության գծով պայմանագրեր, որպես վարձակալ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (ծանոթ. 9)

Վարձակալության գծով պարտավորություն

	'000 դրամ
Մնացորդ առ 01.01.2022թ., այդ թվում	33,977
- ոչ ընթացիկ մաս	19,560
- ընթացիկ մաս	14,417
Նոր վարձակալությունների գծով պարտավորության աճ (ֆինանսական վարձակալությամբ /լիզինգով/ ձեռքբերված տեխնիկաներ)	230,248
Հաշվեգրված տոկոսներ	11,975
Պարտավորության մարում	61,101
Մնացորդ առ 31.12.2022թ.	215,099
- ոչ ընթացիկ մաս	94,216

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- ընթացիկ մաս

120,883

Լիզինգը հիդրավիլի էքսկավատոր CAT 336-07 և հիդրավիլի էքսկավատոր CAT 336-GC JFW22168 տեխնիկաների համար տրամադրվել է 13% տարեկան տոկոսադրույքով, մինչև 22/11/2027թ. մարման ժամկետով:

Լիզինգը CIFA PC 506/309 E6 բետոնամղիչ պոմպի համար տրամադրվել է 15% տարեկան տոկոսադրույքով, մինչև 10/12/2025թ. մարման ժամկետով:

31.12.2022թ. դրությամբ լիզինգի գծով պարտավորության հաշվեկշռային մնացորդը կազմել է 175,874 հազար դրամ:

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	‘000 դրամ
Վարձակալության գծով տոկոսներ	11,975
Կարճաժամկետ և փոքրաթեք ակտիվների վարձակալության գծով վարձավճարներ	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	6,323

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

Խումբը դասակարգել է

- վարձակալության գծով պարտավորության գծով դրամական արտահոսքերը որպես ֆինանսավորման գործունեություն
- կարճաժամկետ և փոքրաթեք ակտիվների վարձակալության գծով դրամական արտահոսքերը որպես գործառնական գործունեություն

	‘000 դրամ
Երկարաժամկետ վարձակալության գծով պարտավորությունների մարումից դրամական արտահոսք	13,820

Կարճաժամկետ վարձակալություններ

‘000 դրամ	Պարտավորության մնացորդ 31.12.2021թ	Ավելացում	Նվազեցում	Պարտավորության մնացորդ 31.12.2022թ
Ընդամենը	11,610	2,744	(14,354)	-

20. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

‘000 դրամ	Մնացորդ 31.12.2022թ.	Մնացորդ 31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	157,546	154,265
- նյութերի ձեռքբերումից	12,196	8,659
- ծառայությունների ձեռքբերումից, որից՝	145,350	145,606
կապակցված կողմերի գծով	39,422	80,457

Առևտրային կրեդիտորական պարտքերը տոկոսային չեն և, որպես կանոն, մարվում են 30 օրվա ընթացքում:

21. Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ

'000 դրամ	Մնացորդ 31.12.2022թ.		Մնացորդ 31.12.2021թ.	
	կանխավճար	պարտավորություն	կանխավճար	պարտավորություն
Ընդամենը, այդ թվում՝	1,412	257,364	916	57,227
- ԱԱՀ	-	231,569	-	39,907
- եկամտային հարկ	-	21,214	-	15,130

22. Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն

'000 դրամ	Մնացորդ	Մնացորդ
	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	86,299	58,549
- աշխատավարձի գծով	46,807	27,273
- կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով	39,492	31,276

23. Շահաբաժնի գծով պարտավորություն

'000 դրամ	Մնացորդ	Ավելացում	Նվազեցում	Մնացորդ	Ավելացում	Նվազեցում	Մնացորդ
	31.12.2020թ.			31.12.2021թ.			31.12.2022թ.
Ընդամենը	240	55,534	(18,945)	36,829	53,126	(20,404)	69,551

Հաշվետու տարում հայտարարվել է 51,130 հազար դրամ շահաբաժին: Կատարվել է 20,404 հազար դրամ շահաբաժնի պարտավորության մարում և 1,996 հազար դրամ շահաբաժինների գծով նախկինում դուրսգրված պարտավորության վերականգնում:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող հայտարարված շահաբաժինը կազմել է 2.5 հազար դրամ (ծանոթ. 29):

24. Այլ պարտավորություններ

'000 դրամ	Մնացորդ	Մնացորդ
	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	16,411	702
- պարտքեր աշխատակիցներին՝ գործուղումների և այլ գործառնությունների գծով	16,232	684

25. Հասույթ

Հասույթի ուղղություններ

Խումբը հասույթը ստացել է գնորդների հետ պայմանագրերից: Դրանք հիմնականում առաջացել են շինարարական աշխատանքների կատարումից:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

'000 դրամ	2022թ.			2021թ.		
	Հասույթ	Ինքնարժեք	Շահույթ	Հասույթ	Ինքնարժեք	Շահույթ
Ընդամենը, այդ թվում՝	3,365,081	(3,174,538)	190,543	3,748,614	(3,547,271)	201,343
- շին. աշխատանքների կատարումից, ծառայությունների մատուցումից	3,134,763	(3,004,741)	130,022	3,244,921	(3,135,998)	108,923
- վաճառված արտադրանքից	192,823	(140,466)	52,357	259,459	(172,640)	86,819
- վաճառված ապրանքից	37,495	(29,331)	8,164	244,234	(238,633)	5,601

Հասույթի մանրամասնեցում

Ապրանքի (ծառայության) տեսակ	Տարածաշրջան	Գնորդի տեսակ	Պայմանագրի տեսակ	Պայմանագրի տեսակ	Ապրանքի (ծառայության) փոխանցման ժամկետ	Վաճառքի ձևեր	Հասույթ (հազար դրամ)
Շին. աշխատանքների կատարում	ՀՀ	պետական հատվածի պատվիրատու	հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի ընթացքում պատվիրատուին հանձնված աշխատանքներ	ուղղակիորեն առանց միջնորդի	-
Շին. աշխատանքների կատարում	ՀՀ	պետական հատվածի պատվիրատու	հաստատուն գնով կնքված պայմանագիր	երկարաժամկետ պայմանագիր	ժամանակի ընթացքում պատվիրատուին հանձնված աշխատանքներ	ուղղակիորեն առանց միջնորդի	2,151,256
Շին. աշխատանքների կատարում	ՀՀ	ոչ պետական հատվածի պատվիրատու	հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի ընթացքում պատվիրատուին հանձնված աշխատանքներ	ուղղակիորեն առանց միջնորդի	-
Շին. աշխատանքների կատարում	ՀՀ	ոչ պետական հատվածի պատվիրատու	հաստատուն գնով կնքված պայմանագիր	երկարաժամկետ պայմանագիր	ժամանակի ընթացքում պատվիրատուին հանձնված աշխատանքներ	ուղղակիորեն առանց միջնորդի	666,937
Ծառայությունների մատուցում	ՀՀ	պետական հատվածի պատվիրատու	հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի ընթացքում պատվիրատուին հանձնված աշխատանքներ	ուղղակիորեն առանց միջնորդի	171,500
Ծառայությունների մատուցում	ՀՀ	ոչ պետական հատվածի պատվիրատու	հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի ընթացքում պատվիրատուին հանձնված աշխատանքներ	ուղղակիորեն առանց միջնորդի	145,071
Վաճառված ապրանք	Արտերկիր	պետական հատվածի գնորդներ	հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի որոշակի պահին գնորդին փոխանցված ապրանքներ	ուղղակիորեն սպառողներին վաճառվ	13,820

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Վաճառված ապրանք	Արտերկիր	ոչ պետական հատվածի գնորդներ	հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի որոշակի գնորդին փոխանցված ապրանքներ	աճուրդային կապիտալի կիրառման արդյունքներ	աճուրդային կապիտալի կիրառման արդյունքներ	8,425
Վաճառված ապրանք	ՀՀ	պետական հատվածի գնորդներ	հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի որոշակի գնորդին փոխանցված ապրանքներ	աճուրդային կապիտալի կիրառման արդյունքներ	աճուրդային կապիտալի կիրառման արդյունքներ	15,250
Վաճառված արտադրանք	ՀՀ	ոչ պետական հատվածի գնորդներ	հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի որոշակի ընթացքում գնորդին փոխանցված արտադրանք	աճուրդային կապիտալի կիրառման արդյունքներ	աճուրդային կապիտալի կիրառման արդյունքներ	192,823

Պայմանագրի գծով մնացորդներ

‘000 դրամ

	2022	2021
- պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	803,874	856,273
- պայմանագրի գծով ակտիվներ	-	234,550
- պայմանագրի գծով պարտավորություններ	-	-

Կատարման պարտականություններ, հաստյթի ճանաչման քաղաքականություն

Անվանումը	Կատարման պարտականության բնույթը և վճարման ժամկետը	Հաստյթի ճանաչման քաղաքականությունը
Շինարարական աշխատանքներ	Խումբը կատարում է ջրանցքների և ոռոգման համակարգերի կառուցման, կապիտալ հիմնանորոգման, ստորգետնյա կառույցների, շենքերի կառուցման և այլ շինարարական աշխատանքներ: Վճարման ժամկետը սահմանվում է պայմանագրերով:	Գնորդը ստանում է շինարարական աշխատանքների արդյունքը կատարման զուգընթաց և Խումբը աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում: Յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ կատարվում է կատարված պարտականությունների կատարման արդյունքի որոշակիացում, չափում, ներկայացում, ընդունում և հաստյթի ճանաչում:

26. Այլ եկամուտներ (ծախսեր)

‘000 դրամ

Այլ եկամուտներ ընդամենը, այդ թվում՝

	2022	2021
- գործառնական վարձակալությունից	14,945	11,404
- ՀՄ-ների օտարումից	9,010	10,542
- այլ պաշարների վաճառքից	47,130	31,455

‘000 դրամ

	2022	2021
Այլ ծախսեր ընդամենը, այդ թվում՝	(81,288)	(67,311)
- անհատույց տրված ակտիվներից	(8,982)	(14,832)
- ՀՄ-ների օտարումից	(5,845)	(6,896)
- այլ պաշարների վաճառքից	(40,365)	(26,799)
- վնասի փոխհատուցումից	(8,514)	(9,601)
- ՀՄ-ների դուրսգրումից	(4,259)	(2,389)
- տույժերից, տուգանքներից	(17)	(765)
- պարտքերի դուրսգրումից	(8,010)	(115)
- բանկային ծառայություններից	(1,399)	(623)
- շահաբաժինների գծով պարտավորությունների վերականգնումից	(1,996)	(4,405)

27. Ֆինանսական եկամուտներ և ֆինանսական ծախսեր

‘000 դրամ

	2022	2021
Ֆինանսական եկամուտներ ընդամենը, այդ թվում՝	152,150	144,261
- կապակցված կողմերի գծով	152,150	144,261
Ֆինանսական (տոկոսային) ծախսեր ընդամենը, այդ թվում՝	(93,483)	(62,895)
• վարկերի և երաշխիքների գծով	(81,294)	(59,556)
• վարձակալության գծով	(12,188)	(3,339)

Ֆինանսական եկամուտը տրված անտոկոս և տոկոսով փոխառությունների գծով տոկոսային եկամուտն է: Անտոկոս փոխառությունները սկզբնական ճանաչման պահին չափվել են իրական (զեղչված) արժեքով, սկզբնական ճանաչումից հետո՝ ամորտիզացված արժեքով: Արդյունքային տոկոսադրույքը գնահատվել է 12% (ծանոթ. 10):

28. Շահութահարկ

Շահութահարկի դրույքաչափը 2022թ. 18% է (2021թ.-ին՝ 18%):

Շահութահարկի գումարի ճանաչում

‘000 դրամ

	2022	2021
- շահույթ (վնասում) ճանաչված շահութահարկի գումար, այդ թվում՝	5,565	2,184
○ ընթացիկ հարկի գծով	(12,086)	(4,906)
○ հետաձգված հարկի գծով	17,651	7,090
- այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկի գումար, այդ թվում՝		
○ հետաձգված հարկի գծով	-	-
- ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված շահութահարկի գումար, այդ թվում՝		
○ հետաձգված հարկի գծով	(26,854)	(25,342)

Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

‘000 դրամ

	2022	2021
Հարկի կիրառվող դրույք	18%	18%
Շահույթը (վնասը) մինչև հարկումը	91,630	108,851
Չնվազեցվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	(24,486)	(81,595)
Հարկվող շահույթը	67,144	27,256
Ընթացիկ հարկ	12,086	4,906
Հարկի գործող միջին դրույքը	13,2%	4,5%

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

‘000 դրամ

	Ծանոթ.	(+) Հարկվող ժամանակավոր տարբերություն	
		(-) Նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություն	
		2022	2021
Հիմնական միջոցներ	8	1,031,421	1,102,098
Փոխառություններ	10	(604,062)	(750,969)
Աշխատավարձի և այլ կարճ. հատուցումների գծով պարտավորություն	22	(39,492)	(31,276)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	9	654	1,261
Պաշարներ	11	-	(200,910)
Առևտրական դեբիտորական պարտքեր	13	(3,863)	(208,474)
Շահաբաժնի գծով պարտավորություններ		(4,847)	-
Ընդամենը		379,811	328,678
Հարկի դրույքը		18%	18%
Հետաձգված հարկային պարտավորություն		68,366	59,162

«Հիմնական միջոցներ» հոդվածում հարկվող ժամանակավոր տարբերությունը առաջացել է հիմնական միջոցի միավորի՝ վերագնահատված արժեքով ներկայացումից և ֆինանսական ու հարկային հաշվառման նպատակներով տարբեր օգտակար ծառայության ժամկետների կիրառումից:

«Փոխառություններ» հոդվածում նվազեցվող ժամանակավոր տարբերությունը առաջացել անտոկոս փոխառությունների զեղչումից և արժեզրկման գծով պահուստից: Ընդ որում՝ փոխառությունների սկզբնական չափման ժամանակ առաջացած հարկային հետևանքը (հետաձգված հարկային ակտիվը) ճանաչվել է սեփական կապիտալում:

«Առևտրական դեբիտորական պարտքեր» հոդվածում նվազեցվող ժամանակավոր տարբերությունը առաջացել է արժեզրկման կորուստից:

«Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է աշխատակիցների կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով:

«Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է վարձակալված ակտիվների գծով ֆինանսական հաշվառման և հարկային հաշվառման նպատակներով տարբեր մոտեցումների կիրառումից:

«Շահաբաժնի գծով պարտավորություններ» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է ֆինանսական հաշվառման և հարկային հաշվառման նպատակներով տարբեր մոտեցումների կիրառումից:

Չկան որևէ նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ, չօգտագործված հարկային վնասներ և չօգտագործված հարկային զեղչեր, որոնց համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչվել որևէ հետաձգված հարկային ակտիվ:

29. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Խումբը ունի միայն սովորական բաժնետոմսեր՝ 20,452 հատ: Նոսրացման հետևանք ունեցող ֆինանսական գործիքներ չկան: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթները հաշվարկելիս որպես համարիչ օգտագործված գումարը և մայր կազմակերպությանը վերագրվող շահույթը, ինչպես նաև որպես հայտարար օգտագործված սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը և այս հայտարարների համադրումը միմյանց հետ նույնն են, քանի որ Խումբը չունի չվերահսկող բաժնեմաս:

30. Շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ

‘000 դրամ	Ծանոթ.	2022	2021
Հասույթ	25	3,365,081	3,748,614
Գործառնական այլ եկամուտներ	26	75,635	59,862
Պատրաստի արտադրանքի և անավարտ արտադրանքի փոփոխություններ		(2,309)	(11,153)
Օգտագործված հումք և նյութեր		(1,380,980)	(1,677,088)
Աշխատավարձ և կարճ. այլ հատուցումներ		(691,058)	(527,967)
ՀՄ-ների մաշվածություն		(170,042)	(151,424)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն		(6,323)	(6,322)
ՈՆԱ-ների ամրտիզացիա		(3,894)	(4,392)
Ենթակապալ (աշխատանքներ, ծառայություններ)		(685,749)	(1,059,254)
Այլ ծախսեր		(484,967)	(342,935)
Գործառնական շահույթ		15,394	27,941
Ֆինանսական եկամուտներ	27	152,150	144,261
Ֆինանսական ծախսեր	27	(93,483)	(62,895)
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ (հակադարձումից օգուտներ)	10,13	20,028	(1,108)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(2,459)	652
Շահույթը մինչև հարկումը		91,630	108,851
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	28	5,565	2,184
Զույգ շահույթ		97,195	111,035

31. Իրական արժեք. ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը

Իրական արժեք

Հիմնական ֆինանսական ակտիվներն են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները, դրամական միջոցները, իսկ ֆինանսական պարտավորությունները՝ վարկերը, վարձակալության գծով պարտավորությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են ամրտիզացված արժեքով և դրանց գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են հաշվեկշռային արժեքներին:

Ֆինանսական ռիսկերի կառավարման հիմունքներ

Խումբը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման համար և վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկողության մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Խումբը չի հեջավորում իր ենթարկվածությունը այդ ռիսկերին:

Համախմբված ֆինանսական հաշվեկշիռային տեղեկություններին կից ծանոթագրություններ

Պարտքային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքեր) և ներդրումային գործունեության (տրված փոխառություններ) հետ:

Վաճառքների գծով պարտքային ռիսկի կառավարումն իրականացվում է հաշվապահության կողմից: Դեբիտորական պարտքերի գծով իրականացվում է կանոնավոր մոնիտորինգ: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է բոլոր գնորդների համար արժեզրկման (անհավաքագրելիության) ստուգում՝ անհատական հիմունքով: Պարտքերի համար ապահովություն (գրավ) չի պահանջվում:

Առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին իր ենթարկվածությունը սահմանափակելու համար Խումբը վճարման առավելագույն ժամկետ է սահմանել 30 օր: Դեբիտորներից ոչ մեկը չունի արտաքին պարտքային վարկանիշ: Դեբիտորների մեծամասնությունը համագործակցում է Խմբի հետ շատ երկար ժամանակ: Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկի համակենտրոնացումը գնահատվում է ցածր:

Շահույթում կամ վնասում ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները (ծանոթ. 10,13)՝
‘000 դրամ

	2022	2021
Գնորդների հետ պայմանագրերից առաջացած առևտրական դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստ	(3,863)	(26,077)
Փոխառությունների գծով արժեզրկումից կորուստ	(47,217)	(45,031)
Ընդամենը	(51,080)	(71,108)

Պարտքային ռիսկին ենթարկվածության և արժեզրկումից կորուստների վերաբերյալ 31.12.2022թ. դրությամբ (ծանոթ. 10,13)՝

‘000 դրամ	Կորստի միջին կշռված մակարդակ	Համախառն հաշվեկշռային արժեք	Կորստի պահուսպ	Պարտքային առումով արժեզրկված
Ոչ ժամկետանց (ընթացիկ)	0.5%	772,603	3,863	ոչ
Ժամկետանց 91-ից ավել	30%	19,870	5,961	այո
Ոչ ժամկետանց (ոչ ընթացիկ)	3,0%	1,375,187	41,256	այո
Ընդամենը		2,167,660	51,080	

Արժեզրկումից կորուստների պահուսպի փոփոխությունները (ծանոթ. 10,13)՝

‘000 դրամ	2022	2021
Մնացորդ առ 1 հունվարի	71,108	70,000
Դուրս գրված գումարներ	-	-
Պահուստի վերաչափում	(20,028)	1,108
Մնացորդ առ 1 հունվարի	51,080	71,108

Կորուստի մակարդակները հաշվարկվում են վերջին երեք տարիների փաստացի փորձի հիման վրա: Հաշվի առնելով առևտրական դեբիտորական պարտքերի մնացորդների կարճաժամկետ բնույթը, ապագայամետ տեղեկատվությունը հաշվի չի առնվում պարտքային կորուստների հաշվարկում:

ՀՀ առևտրային բանկերը Խմբին տրամադրել են 2,188,430 հազար դրամի երաշխիքներ՝ ի ապահովումն շինարարական աշխատանքների: Տրամադրված երաշխիքները գործում են մինչև 2024թ. հունվարի 9-ը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Իրացվելիության ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ Խումբը դժվարություններ կունենա իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Խումբը իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելի գործիքը: Խմբի նպատակն է պահպանել ֆինանսավորման շարունակականության և ճկունության միջև հավասարակշռությունը՝ բանկային օվերդրաֆտների, վարկերի և ապահովով պաշարների գնման պայմանագրերի օգտագործման միջոցով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հավասար են չզեղչված պայմանագրային վճարումներին, բացառությամբ ստացված անտոկոս փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հիմնված չզեղչված պայմանագրային վճարումների վրա, ինչպես նաև հաշվեկշռային արժեքները:

‘000 դրամ

31.12.2022թ.

	Ցպահանջ	Պայմանագրային վճարումներ			Հաշվեկշռային արժեք
		մինչև 1 տարի	1-ից 5 տարի	Ընդամենը	
Վարկեր	-	553,007	68,366	621,373	621,373
ՀՀ դրամ	-	553,007	68,366	621,373	621,373
Փոխառություններ	-	3,440	-	3,440	3,440
Վարձակալության գծով պարտավորություններ	-	120,883	94,216	215,099	215,099
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	157,546	-	157,546	157,546
Շահաբաժինների գծով պարտավորություններ	-	69,551	-	69,551	69,551
Այլ պարտավորություններ	-	363,282	-	363,282	363,282

‘000 դրամ

31.12.2021թ.

	Ցպահանջ	Պայմանագրային վճարումներ			Հաշվեկշռային արժեք
		մինչև 1 տարի	1-ից 5 տարի	Ընդամենը	
Վարկեր	-	272,799	212,132	484,931	484,931
ՀՀ դրամ	-	272,799	212,132	484,931	484,931
Վարձակալության գծով պարտավորություններ	-	26,027	19,560	45,588	45,588
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	154,265	-	154,265	154,265
Շահաբաժինների գծով պարտավորություններ	-	36,829	-	36,829	36,829
Այլ պարտավորություններ	-	116,477	-	116,477	116,477

Շուկայական ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է երեք տեսակի ռիսկ՝ արժույթային ռիսկ, տոկոսադրույքային ռիսկ և այլ գնային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, գնումների գծով կրեդիտորական պարտքերը, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, վաճառքների գծով դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները:

Արժույթային ռիսկ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Այն բանի դիտարկում է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի փոխարժեքների փոփոխության դիտարկում ենթարկվում է արտարժույթով վարկերը, գնումների գծով կրեդիտորական պարտքերը: Արժույթները, որոնք հիմնականում առաջացնում են նման դիտարկում, հետևյալն են՝ ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ: Խումբը հաշվետու տարում չունի արտարժույթով գնանշված ֆինանսական գործիքներ:

Հոդված	USD		EUR		RUB	
	2022	2021	2022	2021	2022	2021
Ընթացիկ ակտիվներ						
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	-	-	-	-	1,262,674	-
Դրամական միջոցներ	260,000	-	125,000	-	-	-
Ընթացիկ պարտավորություններ						
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	-	200	-	-	935,567	-
Զույգ հաշվեկշիռ	260,000	(200)	125,000	-	352,538	-

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժույթային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

	«Որամ»	31.12.2022	31.12.2021
1 ԱՄՆ դոլար		393.57	480.14
1 Եվրո		420.06	542.61
1 Ռուբլի		5.59	6.42

Խմբի քաղաքականության համաձայն՝ տարեվերջին արտարժույթով ֆինանսական պարտավորությունների և ակտիվների տարբերության զուտ մնացորդը չպետք է գերազանցի տարվա հասույթի 20%-ը:

Աղյուսակում ներկայացված է ԱՄՆ դոլարի, Եվրոի փոխարժեքի հնարավոր փոփոխության նկատմամբ զգայունությունը՝ այլ փոփոխականների հաստատուն լինելու դեպքում: Խմբի նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը պայմանավորված է դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների փոփոխություններով: Այլ արժույթների փոփոխությունների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը էական չէ:

	Արտարժույթ	Փոխարժեքի փոփոխություն	Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը ('000 դրամ)
2022թ.	ԱՄՆ դոլար	+5%/-5%	5,116/(5,116)
2021թ.	ԱՄՆ դոլար	+5%/-5%	5/(5)
2022թ.	Եվրո	+6%/-6%	3,150/(3,150)
2021թ.	Եվրո	+6%/-6%	-

Տոկոսադրույքային ռիսկ

Այն բանի դիտարկում է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի փոփոխությունները գլխավորապես ազդում են վարկերի վրա՝ փոփոխելով նրանց իրական արժեքը: Ստացված վարկերը ֆիքսված տոկոսադրույքով են: Ղեկավարությունը չունի ձևակերպված քաղաքականություն ֆիքսված կամ փոփոխական տոկոսադրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը: Նոր տոկոսակիր ֆինանսական պարտավորությունների ներգրավման դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա, որոշելու, թե որ տիպի տոկոսադրույքը ավելի բարենպաստ կլինի Խմբի համար մինչև ակնկալվող մարման ժամկետի ընթացքում:

Խումբը ունի ֆիքսված տոկոսադրույքով տոկոսակիր ֆինանսական գործիքների հետևյալ կառուցվածքը.

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

‘000 դրամ	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ֆինանսական ակտիվներ	1,333,932	1,194,120
Ֆինանսական պարտավորություններ	836,473	530,518
Զուտ հաշվեկշիռ	497,459	663,602

Այլ գնային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժույթային ռիսկից առաջացողներից) արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով:

Այլ գնային ռիսկերի ազդեցությունը էական չէ:

32. Կապիտալի կառավարում

Կապիտալը ներառում է բաժնետերերին վերագրելի սեփական կապիտալը՝ այդ թվում բաժնետերերին ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպություններին տրված ու ստացված անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառությունների սկզբնական չափումից առաջացած զուտ արդյունքը (ծանոթ. 10):

Կապիտալի կառավարման հիմնական նպատակն է կապիտալի վարկունակության կայունության և ֆինանսական ցուցանիշների համապատասխան մակարդակի պահպանումն է՝ Խմբի գործունեության աջակցության և բաժնետերերի շահույթը մաքսիմալացնելու նպատակով:

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն: Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ կարգավորելու նպատակով Խումբը սահմանում է վճարվող շահաբաժինների գումարը կամ կարող է թողարկել նոր բաժնետոմսեր:

Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն

‘000 դրամ	2022	2021
Ընդամենը պարտավորություններ	3,079,280	1,546,151
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,214,022	15,400
Ընդամենը զուտ պարտք	1,865,258	1,530,751
Ընդամենը սեփական կապիտալ	4,375,941	4,359,527
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն	42,6%	35,1%

33. Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններում

	Պարտավորություններ		Սեփական կապիտալ		Ընդամենը
	Վարկեր և փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություն	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ, այլ	
Մնացորդ առ 01.01.2022թ.	484,929	45,588	51,130	4,308,397	4,878,434
Մուտքեր վարկերից և փոխառություններից	1,104,950	-	-	-	1,104,950
Վարկերի և փոխառությունների մարում	(967,084)	-	-	-	(967,084)
Վարձակալության պարտավորության վճարում	-	(27,900)	-	-	(27,900)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող	137,866	(27900)	-	-	109,966
դրամական հոսքերի հետ կապված					
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	288	-	-	-	288
Այլ փոփոխություններ	-	(35,568)	-	16,414	(19,194)
Տոկոսային ծախս	81,294	11,975	-	-	93,269
Վճարված տոկոսներ	(79,564)	(9,244)	-	-	(88,808)
Նոր	-	230,248	-	-	230,248
վարձակալություններ Ընդամենը	1,730	232,979	-	-	234,709
պարտավորության հետ կապված փոփոխություններ					
Ընդամենը սեփական կապիտալի հետ կապված փոփոխություններ	139,882	169,511	-	16,414	325,809
Մնացորդ առ 31.12.2022թ.	624,813	215,099	51,130	4,324,811	5,215,853

34. Կապակցված կողմերի բացահայտումներ

Կապակցված կողմերի փոխհարաբերությունների բնույթը

Անվանումը	Բնույթը
Վերահսկող	Պարոյր Հակոբյան՝ խոշոր բաժնետեր (55.79%)
Դուստր կազմակերպություն	«Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ՝ 100% բաժնեմասով

Կապակցված կողմերի հետ գործարքներ

Դուստր կազմակերպություն

Հաշվետու և նախորդ տարում դուստր կազմակերպությունը գործունեություն չի իրականացրել: Առ 31.12.2022թ. Դուստր կազմակերպության ակտիվները և սեփական կապիտալը՝ 1,696 հազար դրամ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Այլ կապակցված կողմեր

‘000 դրամ

Տանոթ.	Տրված փոխառություններ	Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	Ստացված փոխառություններ	Տրված կանխավճարներ և ծառայությունների համար
10	13	20	18	12	
Մնացորդ 31.12.2020թ.	1,831,980	167,973	33,550	-	239,000
Ավելացում	60,980	132,680	531,825	38,085	98,312
Նվազեցում	(64,789)	(201,486)	(484,918)	(38,085)	(105,821)
Մնացորդ 31.12.2021թ.	1,828,171	99,167	80,457	-	231,491
Ավելացում	11,112	54,252	851,163	104,036	718,563
Նվազեցում	(33,226)	(77,664)	(848,653)	(104,036)	(318,947)
Մնացորդ 31.12.2022թ.	1,806,057	75,756	82,967	-	631,107

Կապակցված կողմերի վերաբերյալ այլ բացահայտումներ՝ տես ծանոթ՝ 8, 9, 10, 12, 13, 17, 19, 20, 21:

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմին (3 անձ) կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2022թ. կազմել է 27,230 հազար դրամ (2021թ.՝ 26,698 հազար դրամ): Առանցքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

35. Պայմանականություններ

Քիզնես միջավայր

Խումբը իր գործունեությունը իրականացնում է ՀՀ-ում, որը գտնվում է քաղաքական և տնտեսական փոփոխությունների փուլում: Չկան բիզնեսի և վերահսկողական այնպիսի զարգացած ենթակառուցվածքներ, ինչպիսիք կան ավելի հասուն շուկայական տնտեսություններում: Ավելին, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեությունը և վերջիններս ոչ միշտ են ճիշտ արտացոլում ֆինանսական գործիքների արժեքը: Հետագա տնտեսական աճի հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է և տարածաշրջանային անկայունությունը: Աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչն ազդում է համընդհանուր գնողունակության և պահանջարկի վրա: 2020թ. սեպտեմբերին Լեոնային Ղարաբաղում սկսվեց պատերազմ, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիր: Այն չի պահպանվում Ադրբեջանի կողմից: Ժամանակ առ ժամանակ Լեոնային Ղարաբաղի տարածքում, ինչպես նաև Հայաստանի սահմանային տարածքներում տեղի են ունենում զինված բախումներ: Ադրբեջանը օկուպացրել է Հայաստանի սուվերեն տարածքներ: Այս ամենը հանգեցրեց սոցիալական հուզումների, տարածքային և ուղրտային գործարարության նվազմանը և անորոշությանը բիզնես միջավայրում:

2022թ. փետրվարին սկսվել է ռուս-ուկրաինական ռազմական հակամարտություն, որի հետևանքով կան հազարավոր զոհեր, մի քանի միլիոն բնակչության տեղահանվել կամ տեղափոխվել բնակության այլ վայրեր, Ուկրաինայում տնտեսական գործունեությունը խաթարվել է, տնտեսությունը, ենթակառուցվածքները կրել են զգալի վնասներ: Ի պատասխան՝ բազմաթիվ երկրներ տնտեսական պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի (և որոշ դեպքերում՝ Բելառուսի) նկատմամբ: Բացի պատժամիջոցների սահմանումից, մեծ թվով խոշոր պետական և մասնավոր ընկերություններ հայտարարել են կամավոր գործողությունների մասին՝ Ռուսաստանի և Բելառուսի հետ բիզնես գործունեությունը սահմանափակելու համար: Այս գործողությունները ներառում են Ռուսաստանում/Բելառուսում ակտիվների օտարման կամ գործունեությունը դադարեցնելու պլաններ, այս երկրներ արտահանման կամ ներմուծման կրճատում և ծառայությունների մատուցման դադարեցում: Ռուս-ուկրաինական ռազմական հակամարտությունը և դրա հետ կապված իրադարձությունները տեղի են ունենում գլոբալ տնտեսական զգալի անորոշության և անկայունության ժամանակաշրջանում, և հետևանքները, ամենայն հավանականությամբ, կազդեն և կվատթարացնեն ընթացիկ շուկայական պայմանները:

Վերոնշյալ հանգամանքների ամբողջական ազդեցությունը խմբի գործունեության վրա գնահատել հնարավոր չէ, այնուամենայնիվ, ղեկավարությունը գտնում է, որ այս հանգամանքներն էական ազդեցություն չեն ունենա խմբի ֆինանսավորման, ինչպես նաև ընթացիկ գործունեության ու ծրագրերի իրականացման վրա: Այնուամենայնիվ, բիզնես միջավայրի ապագա փոփոխությունները կարող են տարբերվել Ղեկավարության գնահատումներից:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ապահովագրություն

ՀՀ-ում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում: Ներմուծվում են զարգացած երկրներում վաղուց կիրառելի ապահովագրական գործիքներ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ հումաբը իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ):

Քանի դեռ չի իրականացված ակտիվների ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն համախմբված ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

Դատական հայցեր

2022թ. դեկտեմբերի 31-ի և սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ համախմբված դատական հայցեր չկան:

Հարկերի հաշվառման անորոշություններ և պայմանականություններ

ՀՀ հարկային համակարգը, հարկային հարաբերությունները կարգավորվում է հիմնականում ՀՀ հարկային օրենսգրքով: Օրենսդրությունում փոփոխությունները, պաշտոնական պարզաբանումները կամ իրազեկումները, դատական մարմինների որոշումները, օրենսդրության տարրընթերցումները, տարաբնույթ մեկնաբանությունները առաջացնում են հարկային պարտավորությունների գնահատման անորոշություններ: Ներկայացված և վճարված հարկային պարտավորությունների ճշտությունը ենթակա է ստուգման հարկային մարմինների կողմից, որոնք խախտումների համար իրավասու են առաջադրել տույժեր, տուգանքներ: Հարկային պարտավորությունները չեն կարող փոփոխվել, եթե դրանք վերաբերում են երեք տարուց ավել վաղեմությանը:

Ղեկավարությունը որոշում է, թե արդյոք հարկավոր է դիտարկել յուրաքանչյուր հարկային անորոշությունն առանձին կամ մեկ և ավելի հարկային անորոշությունների հետ միասին՝ կախված նրանից, թե որ մոտեցումն է թույլ տալիս լավագույնս կանխատեսել անորոշության լուծումը: Ղեկավարությունը ենթադրում է, որ հարկային մարմինը կստուգի այն գումարները, որոնք նա իրավունք ունի ստուգելու և այդ ստուգումները կատարելիս՝ կունենա համապատասխան տեղեկություններին վերաբերող ամբողջական տեղեկատվություն:

Ղեկավարությունը գտնում է, որ ճիշտ է ճանաչել հարկային պարտավորությունները: Այնուամենայնիվ, հարկային մարմինը կարող է ունենալ համախմբված հաշվարկված և ներկայացված հարկային պարտավորությունների վերաբերյալ այլ մեկնաբանություններ, որոնք կարող են ի հայտ գալ ստուգումների, ուսումնասիրությունների ընթացքում:

36. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից (31.12.2022թ) հետո մինչև վավերացման ամսաթիվը (18.04.2023թ.) ընկած ժամանակահատվածում:

37. Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են հրապարակման համար 2023թ. ապրիլի 18-ին՝ գլխավոր տնօրեն Պարույր Հակոբյանի և գլխավոր հաշվապահ Սեդա Փարսյանի կողմից:



Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Handwritten signatures in blue ink, one above the other, corresponding to the positions of the Chief Executive Officer and Chief Accountant.

Պարույր Հակոբյան

Սեդա Փարսյան